Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ: Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ հասկանալու համար նախ պետք է ուսանողին բացատրել «էթնոկարծրատիպ» եզրույթը: Որպեսզի ուսանողն ամբողջական պատկերացում կազմի, անհրաժեշտ է եզրույթի սահմանումը ուղեկցել օրինակներով: Կարևոր է տարբերակել կարծրատիպը էթնոկարծրատիպից: Ցույց տալ վերոնշյալ երկուսի տարբերությունը: Էթնոկարծրատիպը մեկ էթնոսի պատկերացումն է մյուսի էթնոսի մասին, որը ինչպես կարող է համապատասխանել իրականությանը, այնպես էլ՝ ոչ: Օրինակ՝ բոլոր հայերն արծվաքիթ են: Անխոս, այս պնդումը որոշ իմաստով բնորոշ է մեզ՝ հայերիս, սակայն չի կարելի պնդել, որ չկա ոչ արծվաքիթ հայ: Կամ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» կատակերգությունում հրեա Շայլոկի միջոցով էթնոկարծրատիպ է ստեղծվում հրեա Ժողովրդի մասին: Համաձայն այդ էթնոկարծրատիպի հրեան ներկա-

յանում է որպես վաշխառու, գծուծ, խաբեբա, մարդատյաց և այլն (Շեքսպիր 1922): Կարծրատիպը լայն իմաստով սահմանվում է իբրև նախապաշարմունք ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ երևույթի մասին: Կարծրատիպերի հիմք կարող է դառնալ առաջին տպավորությունը, անհատի մտածողության առանձնահատկությունը, հոգեկերտվածքը, զրույցի ընթացքում ստացած տեղեկությունը և այլն: Կարծրատիպն առավել լայն բովանդակություն ունի, քան՝ էթնոկարծրատիպը և եթե էթնոկարծրատիպը բնորոշում է որևէ էթնոսի, ապա կարծրատիպը պարտադիր չէ արտացոլի որևէ էթնոսի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք ընկալում:

Էթնոկարծրատիպերի ձևավորման հիմք կարող է հանդիսանալ նաև միջէթնիկական կոնֆլիկտը: Օրինակ՝ թուրքերի մասին էթնոկարծրատիպը, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Էթնոկարծրատիպերի ձևավորման գործում կարևոր դերակատարումունեն նաև ԶԼՄ-ները, ֆիլմերն ու մուլտֆիլմերը (James Craig Holte 1984):

Ավտոկարծրատիպեր և հետերոկարծրատիպեր: Որպեսզի ուսանողը հասկանա ավտոկարծրատիպերի և հետերոկարծրատիպերի տարբերությունները, անհրաժեշտ է ներկայացնել յուրայինի և օտարի պատկերը: Մենք՝ հայերս, ունենք բազմաթիվ ավտոկարծրատիպեր: Վառ օրինակ է վանեցիների մասին տարածված հայտնի խոսույթը, թե իբր վանեցիները ժլատ են, փողասեր, ոսկիասեր: Կամ մենք՝ հայերս, երբեմն մեզ վերագրում ենք հատկություններ, որոնց կրողը չենք, ինչի արդյունքում ձևավորվում են ավտոկարծրատիպեր: Նման օրինակ կարելի է դիտարկել հայի՝ աշխատասեր լինելու մասին ավտոկարծրատիպը: Այս պարագայում ոչ թե ռուսը, թուրքը կամ անգլիացին է մեզ վերագրում հատկություն, այլ մենք ինքներս մեր մասին ստեղծում ենք էթնոկարծրատիպեր: Հետևապես ավտոկարծրատիպը սահմանվում է որպես էթնոսի պատկերացումն ինքն իր մասին: Ավտոկարծրատիպերն իրենց բովանդակությամբ պարզ են, հստակ սահմանելի և առավելապես հիմնվում են ինքն իր մասին տվյալ ժողովրդի պատկերացման վրա: Ավտոկարծրատիպերը, առհասարակ, հիմնվում են ազգի՝ իրեն դրական լույսի ներքո ներկայացնելու, դրական արժևորելու և գնահատելու վրա (Жерновая, Смирнова 2014):

Արվեստում, օրինակ, կարելի է դիտարկել ավտոկարծրատիպերի հետևյալ օրինակները: Երբ Լեոնարդո դա Վինչին ստեղծեց Մոնա Լիզայի կտավը, այն հետագայում դարձավ իր ժամանակաշրջանի խտալացի կնոջ կերպարի խտացում: Իսկ Յան Վերմերի «Մարգարտե ականջօղով կինը»

ծեռք բերեց «Հյուսիսային կամ հոլանդական Մոնա Լիզայի» համարում: Արդեն հայ նկարչության մեջ Հակոբ Հովնաթանյանի «Նատալյա Թեումյանի» դիմանկարը դարձավ Մարտիրոս Սարյանի իսկ բնութագրմամբ հայկական Ջոկոնդա:

Երեք այս կտավների ցուցադրումը թույլ է տալիս ուսանողներին պատկերացում կազմել նաև արվեստում ստեղծված ավտոկարծրատիպերի մասին: Այս կտավներից յուրաքանչյուրն արտացոլում է իրժամանակաշրջանում իտալացի, հոլանդացի և հայ կնոջ հավաքական կերպարը: Եվ ինչ-որ իմաստով այս կտավները ստեղծում են իրենց ժամանակի կնոջ ավտոկարծրատիպը, որի շնորհիվ նաև հետագայում հնարավոր է դառնում վերստեղծել տվյալ ժամանակաշրջանի կնոջ կերպարը այլ ազգի ներկայացուցչի համար: Անխոս, նկարիչներն ի սկզբանե դժվար թե կտավների մեջ դրած լինեն իրենց ժամանակաշրջանի կնոջ ինքնությունը սահմանող իմաստ, սակայն հետագայում այդ կտավները կարելի է մեկնաբանել ինչպես ավտոկարծրատիպերի, այնպես էլ հետերոկարծրատիպերի տեսակետից:

Հետերոկարծրատիպերը սահմանելու համար անհրաժեշտ է տվյալ էթնոսին դիտարկել մեկ ուրիշ էթնոսի աչքերով: Րաֆֆին, օրինակ, «Կայծեր» վեպում առաջ է քաշում հարց՝ ի՞նչ է թուրքը և ի՞նչ է քուրդը: Նա քրդերին ներկայացնում է որպես գիր չունեցող, ավազակ, նամազի իմաստը չհասկացող, մեքենայաբար աղոթող, վերժխնդիր ազգի ներկայացուցիչ (Րաֆֆի 1963): Րաֆֆու այս նկարագրությունը հետերոկարծրատիպի վառ օրինակ է, քանզի նա նկարագրում է քրդին՝ լինելով այլ ազգի ներկայացուցիչ և դիտարկում է քրդին աշխարհահաճանաչողության իր դիրքերից: Հետերոկարծրատիպերի օրինակներ կարելի է գտնել նաև պոեզիայում, ֆիլմերում, մամուլում և այլն: Հետերոկարծրատիպերն իրենց բովանդակությամբ առավել բարդ են, քանզի դրանք ձևավորվում են սոցիոմշակութային, պատմական և այլ գործոնների ազդեցությամբ: Բերված օրինակները թույլ են տալիս ուսանողին հստակ պատկերացում կազմել ու ինքնուրույնաբար սահմանել՝ ինչ է ավտոկարծրատիպը և ինչ է հետերոկարծրատիպը:

Դրական, բացասական և չեզոք էթնոկարծրատիպեր: Էթնոկարծրատիպերն ունեն դասակարգման տարբեր հիմքեր: Լայն իմաստով կարելի է առանձնացնել դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպեր: Դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերը տարբերակելու համար ուսանողին պետք է ներկայացնել երեք դատողություն՝ «Հայերը հյուրասեր են», «Ռուսները ծույլ են», «Անզլիացիները սիրում են ըմպել կաթով թեյ»:

Առաջին դատողությունը դրական էթնոկարծրատիպ է, քանի որ արժևորվում, գնահատվում է հայի դրական հատկությունը: Երկրորդ դատողությունը՝ «Ռուսները ծույլ են» բացասական էթնոկարծրատիպ է, քանի որ ծուլությունը չի կարելի դիտարկել որպես դրական երևույթ և հետևապես ռուսին բնութագրելով որպես ծույլ՝ ստեղծվում է բացասական էթնոկարծրատիպ: Չեզոք էթնոկարծրատիպի օրինակ է այն, որ «Անգլիացիները սիրում են ըմպել կաթով թեյ»: Այն, որ անգլիացիները սիրում են թեյ ըմպել և այլն էլ կաթով ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական հատկություն է, քանզի այն արտահայտում է տվյալ ազգի թեյ խմելու սովորույթը, նախընտրությունը: Դրական էթնոկարծրատիպը ստեղծում է տվյալ էթնոսի դրական պատկերը, արժևորում այն հատկությունները, որոնք նաև կարող են համարվել համընդհանուր արժեք: Օրինակ՝ հյուրասիրությունը, աշխատասիրությունը, մարդասիրությունը և այլն: Բացասական էթնոկարծրատիպերը ստեղծում են տվյալ էթնոսի այնպիսի դիմագիծը, որը բացասական հատկություններով է արտահայտվում: Օրինակ՝ ծուլությունը, մարդատյացությունը, անհյուրընկալությունը և այլն: Իսկ ահա չեզոք էթնոկարծրատիպերն իրենց մեջ չեն պարունակում արժևորման տարր: Այսինքն՝ դրանք ոչ թե առանձին հատկություններ են, որոնք բնորոշ են այս կամ այն ազգին և պարունակում են իրենց մեջ արժեքային տարր, այլ դրանք այս կամ ազգին բնորոշ վարքաձևեր և սովորույթներ են: Առհասարակ, ԶԼՄ-ները, տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ դեր ունեն թե՛ դրական, թե՛ բացասական, թե՛ չեզոք էթնոկարծրատիպեր ձևավորելու գործում: Դրական, բացասական և չեզոք էթնոկարծրատիպերն առավել պատկերավոր հասկանալու համար ուսանողին հանձնարարություն է տրվում կազմել նախ իր ազգի վերաբերյալ դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերի աղյուսակ, ապա այն համեմատել այլ ազգի վերաբերյալ կազմված նույնատեսակ այլ աղյուսակի հետ: Լեզվահասարակագիտական ուղղվածությամբ ուսանողների համար կարևոր է նաև էթնոկարծրատիպերը վերլուծել լեզվաբանության տեսակետից: Տարբեր լեզուներում տարածված են արտահայտություններ, որոնք իրենց մեջ խտացնում են մեկ ազգի ամբողջական ինքնություն: Ուսանողների խնդիրն է վեր հանել այն արտահայտությունները, որոնք բնորոշում են նաև տվյալ ինքնությունը: Այդպիսի արտահայտությունների օրինակներ կարելի է փնտրել ինչպես ասացվածքներում, այնպես էլ առօրյա-կենցաղային խոսքում: Օրինակ՝ «հայկական համ», «գերմանական ճշտապահություն», «թուրքական դիվանագիտություն» և այլն: Այս արտահայտություններում արտացոլված է այդ ազգերի վերաբեր-

յալ ստեղծված էթնոկարծրատիպերը, որոնք իրենց բովանդակությամբ լայն են և խտացնում են իրենց մեջ տվյալ ազգի որոշակի բնութագիր: Հաճախ կիրառվում են նաև էթնոնիմներ: Այդպիսի էթնոնիմների օրինակներ են Frogs (Ֆրանսիացիներ), Dagos (իսպանացիներ), yellow-belly (չինացիներ) (Мучкина 2010:114): Կամ՝ կովկասցիներ, ասիացիներ, եվրոպացիներ: Վերջիններս ևս արտահայտում են որոշակի էթնոկարծրատիպ: Օրինակ՝ բռնկուն, կոշտ խառնվածքով մարդուն բնութագրելու փոխարեն կարող են ասել նաև՝ կովկասցի: Մեր լեզվամտածողության մեջ ընդունված էթնոկարծրատիպ է վատ արարքի գերադրական աստիճանը բնութագրել մեկ բառով՝ «թուրք», ինչն ի ցույց է դնում այդ էթնոսի վերաբերյալ մեր ունեցած բացասական վերաբերմունքը: Ուսանողին պետք է բացատրել նման էթնոկարծրատիպերի ծագման պատճառները՝ հիմնվելով պատմական, սոցիոմշակութային, հոգեկերտվածքային տվյալների: Էթնոկարծրատիպեր կան նաև իռլանդական անեկդոտներում, որոնց մեջ արտացոլվում է նրանց ինքնությունը (Seth Kravitz 1977):

Էթնոկարծրատիպերի դերը միջմշակութային հաղորդակցության մեջ: Պատկերացում կազմելով էթնոկարծրատիպերի մասին՝ ուսանողը կարող է վերլուծել, թե դրանք ինչ ազդեցություն կարող են ունենալ միջմշակութային հաղորդակցության վրա: Միջմշակութային հաղորդակցության մեջ, որպես տարբեր մշակույթների միջև երկխոսություն, առանցքային նշանակություն ունի էթնոկարծրատիպերի դերը: Միջմշակութային երկխոսությունն առավել պատկերավոր դարձնելու նպատակով ուսանողներին ներկայացվում է երեք ազգերի ներկայացուցիչների զրույցը, որոնցից յուրաքանչյուրն ունի ձևավորված էթնոկարծրատիպ մյուս ազգի ներկայացուցչի մասին: Դերային բաշխման միջոցով ուսանողները ծավալում են այդ զրույցը միմյանց միջև՝ ցույց տալով, թե ինչ էթնոկարծրատիպեր կան իրենց ներկայացրած ազգի մասին և որքանով են դրանք խոչընդոտում/օգնում միջմշակութային երկխոսության կայացմանը: Պարզ է դառնում, որ տվյալ ազգի մասին դրական էթնոկարծրատիպերն առավել հեշտ են դարձնում միջմշակութային շփումները, եթե այդ էթնոկարծրատիպերը համապատասխանում են իրականությանը, իսկ եթե չեն համապատասխանում, ապա միջմշակութային շփումները կարող են արդյունավետ չլինել: Որպես օրինակ կարելի է դիտարկել չեզոք էթնոկարծրատիպ. ամերիկացին ունի էթնոկարծրատիպ հնդիկ կանանց մասին առ այն, որ բոլոր հնդիկ կանայք ներկայանում են իրենց ազգային հագուստով: Ժամանելով Հնդկաստան՝ նա հայտաբերում է, որ հնդիկ կանանց որոշ հատված հագնվում է եվրոպական ոճի հագուստ կամ՝ ֆրանսիացի

ունի էթնոկարծրատիպ, որ բոլոր հայերը հյուրասեր են և հանդիպելով անհյուրասեր հայի՝ վերախմաստավորում է իր էթնոկարծրատիպը հայերի մասին: Էթնոկարծրատիպերը հաճախ կարող են դառնալ տվյալ ազգի ճանաչողության կարևոր միջոց, եթե արտացոլում են իրականությունը: Այս պարագայում միջմշակութային հաղորդակցությունը կարելի է կառուցել արդյունավետորեն: Եթե դրանք ամբողջությամբ չեն արտացոլում իրականությունը, ապա կարող են դառնալ միջմշակութային չստացված հաղորդակցության պատճառ: Այս պարագայում երկխոսությունը կարող է չստացվել: Էթնոկարծրատիպերի առաջացման պատճառ կարող է դառնալ նաև առանձին անհատների վարքը, որի հիման վրա կարող են ձևավորվել էթնոկարծրատիպեր: Պայմանավորված էթնոկարծրատիպերի տեսակից՝ դրանք կարող են ինչպես խոչընդոտել միջմշակութային շփումները, այնպես էլ՝ կառուցել դրանք: Ֆիլմերի կամ կարճամետրաժ հոլովակների ցուցադրման շնորհիվ ուսանողներն ամբողջական պատկերացում են կազմում, թե ինչպես կարող է էթնոկարծրատիպը խոչընդոտել կամ նպաստել միջմշակութային երկխոսության կայացմանը: Չարլի Չապլինի «Մեծ բռնապետը» ֆիլմում, օրինակ, ներկայացվում է Հիտլերը՝ դրանով իսկ ստեղծելով նացիստական և ֆաշիստական գաղափարախոսությունը կրողների կարծրատիպ, որը, այդ ֆիլմը դիտող հանդիսատեսի մոտ կարող է ձևավորել բացասական էթնոկարծրատիպ՝ Հիտլերի կերպարը տարածելով ամբողջ գերմանացի ժողովրդի վրա: Ուսանողներին ցուցադրելով արևելյան մարտարվեստը ներկայացնող ֆիլմներից դրվագներ՝ պարզ է դառնում, որ հիմնվելով ֆիլմերին՝ նրանք էթնոկարծրատիպ են ստեղծում, որ տվյալ էթնոսին պատկանող բոլոր մարդիկ տիրապետում են այդ մարտարվեստին: Կամ մեկ այլ էթնոկարծրատիպ, երբ հնդկական ֆիլմերին հիմնվելով՝ այլազգիներից շատերը կարծում են, որ բոլոր հնդիկները հրաշալի երգում և պարում են: **Օրինակներ բերելու, էթնոկարծրատիպերը ֆիլմերում դիտարկելու շնորհիվ ցույց է տրվում, որ էթնոկարծրատիպերը երբեմն հապճեպ ընդհանրացման արդյունք են, և ուսանողների համար պարզ է դառնում, որ դրանք այնքան էլ չեն արտացոլում տվյալ ազգի հոգեկերտվածքը:** Որքան էլ զարմանալի թվա, երաժշտությունն անգամ կարող է ստեղծել էթնոկարծրատիպ այլ ազգի վերաբերյալ: Որպեսզի պարզ դառնա, թե ինչպես, ներկայացնենք Մոցարտի «Ռոնդո՝ թուրքական ոճով» կամ առավել հայտնի՝ «Թուրքական մարշ» ստեղծագործությունը: Քչերը գիտեն, որ Մոցարտն այն երբեք չի անվանել «Թուրքական մարշ» և այս անվանումը ծագել է այն պատճառով, որ ավստրիացիները մեծ

համակրանք ունեին առ ենիչերիական նվագախմբի կատարումները, և Մոցարտի ստեղծագործության այս հատվածը հիշեցնում էր իրենց համար սիրելի այդ նվագախմբի կատարումը, ուստի և անվանեցին «Թուրքական մարշ»՝ սրանով իսկ ստեղծելով էթնոկարծրատիպ այն մասին, որ թուքերն իրենց շքերթների ժամանակ քայլում են նման երաժշտության ներքո: Այնինչ, պետք է նշել, որ ենիչերիականները երբեք չէին նվագում շքերթների ընթացքում, այլ նվագում էին դրանից առաջ:

Եզրակացություն: Միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերը մեծ տեղ ու դեր ունեն: Առհասարակ, դրանք «կարող են վերստեղծել իրենց ժամանակի հասարակարգն ու պատմությունը» (Fumiko Hosokawa 1980:15) «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի համատեքստում «էթնոկարծրատիպեր» թեմայի վերլուծությունը կարևոր է՝ հիմնվելով թեման ներկայացնելու մի շարք մեթոդների վրա: Առանձնացնելով ավտոկարծրատիպերն ու հետերոկարծրատիպերը՝ դրանք անհրաժեշտ է ներկայացնել այնպիսի օրինակներով, որոնք ցայտուն կդարձնեն ոչ միայն հիշյալ հասկացությունների տարբերությունները, այլև կստեղծեն դրանց ամբողջական պատկերները թե՛ գրականության, թե՛ արվեստի, թե՛ կինեմատոգրաֆիայի մեջ: Դրական, բացասական, չեզոք էթնոկարծրատիպերի վերլուծությունը գեղարվեստական գրականության մեջ առավել ցայտուն է դարձնում այս երկուսի առանձնահատկությունները և տարբերությունները: Իսկ միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերի ունեցած դերակատարումը խիստ կարևոր է, քանզի հենց դրանց միջոցով են նաև տարբեր էթնոսներ կարծիք կազմում միմյանց մասին, ճանաչում նմանություններն ու տարբերությունները: Նկարչության, երաժշտության, կինեմատոգրաֆիայի մեջ բերված օրինակները ուսանողների համար առավել շեշտված ու պատկերավոր են դարձնում էթնոկարծրատիպերի առկայությունը արվեստում, ցույց տալիս դրանց ազդեցությունը միջմշակութային երկխոսության կայացման վրա:

Դերային բաշխումների, համեմատության, վերլուծության, կարճ հոլովակների, աղյուսակների կազմումը ուսանողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներին հիմնվելով՝ բերել օրինակներ և առավել հստակ ու ամբողջական պատկերացում կազմել միջմշակութային հաղորդակցության մեջ էթնոկարծրատիպերի ծագման, տեղի և դերի, ունեցած ազդեցության մասին: Այսպիսով, կիրառված մեթոդների շնորհիվ պարզ է դառնում, որ կարծրատիպն ու էթնոկարծրատիպը նույնը չեն: Էթնոկարծրատիպերի համե-

մատույթան, վերլուծության շնորհիվ ուսանողի համար ակնհայտ է, որ որոշ էթնոկարծրատիպեր չեն արտացոլում իրականությունը և դրանք չափազանցված պատկերացում են այլ էթնոսի մասին և կան էթնոկարծրատիպեր, որոնք մեծապես արտահայտում են ազգային հոգեկերտվածքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շեքսպիր Ու., Վենետիկի վաճառականը: Կատակերգություն հինգ արարվածով, Եր., 1933: Shakespeare W., Venetiki vacharakany: Karakergutyun hing ararvatsov, Yer. 1933 (In Armenian).
2. Րաֆֆի, Կայծեր, ԵԺ, հ. 4, Եր., 1963: Raffi, Kaytser, EZH, 1963 (In Armenian).
3. Жерновая О., Смирнова О., Позитивная и негативная роли этнических стереотипов нации в создании имиджа страны (на примере Российской Федерации и Великобритании), Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2014, №2 (1), 321-327./ Zhernovaya O., Smirnova O., Pozitivnayainegativnyarolietnicheskikhstereotipovnaciivsozdaniimidzastrani (naprimyereRossiskoyFederaciiVelikobritanii), VestnikNijnegorodnogouniversitetaim. N. I. Lobacheskogo, 2014, 2014, №2 (1), 321-327 (In Russian).
4. Мучкина Е., Этнические стереотипы и их отражение в семантике этнонимов, Филология и человек. 2010, №4./Muchkina E., Etnicheskie stereotipi i ikh otrazhenie v semantikeetnonimov, Filologiya i chelovek. 2010, №4.
5. Fumiko Hosokawa, A functional theory of ethnic stereotypes, Humboldt Journal of Social Relations, Spring/Summer 1980, Vol. 7, No. 2 (Spring/Summer 1980), pp. 15-30.
6. Seth Kravitz, London Jokes and Ethnic Stereotypes, Western Folklore , Oct., 1977, Vol. 36, No. 4 (Oct., 1977), pp. 275-301.
7. James Craig Holte, Unmelting Images: Film, Television, and Ethnic Stereotyping, MELUS, Autumn, 1984, Vol. 11, No. 3, Ethnic Images in Popular Genres and Media (Autumn, 1984), pp. 101-108.

NANE MOVSISYAN - ANALYSIS OF ETHNOSTEREOTYPES DURING TEACHING OF THE SUBJECT "INTERCULTURAL COMMUNICATION"

Key words: *Ethnostereotypes, intercultural communication, negative ethnostereotype, positive ethnostereotype*

This article refers to the analysis of ethnostereotypes within the framework of the subject "Intercultural Communication". Introducing the types of ethnostereotypes, emphasis is made on the methods of studying the topic. Referring to autostereotypes and heterostereotypes, distinguishing positive, negative and neutral types, their examples are shown not only in linguistics, literature, but also in art. The article emphasizes that during the teaching of the "ethnostereotypes" topic, it is necessary to present the ethnostereotypes in the context of the history of painting, literature, cinematography, music, highlight cultural features, emphasize the linguistic aspect of ethnostereotypes, the importance of linguistic thinking from the point of view of the formation of ethnonyms, etc. The point of view is put forward that thanks to the dialogue method, role distribution, the student forms an even deeper understanding of the presented topic, ethno-stereotypes, and is able to clearly distinguish a stereotype from an ethno-stereotype, distinguish whether an ethno-stereotype reflects the mentality of a given nation or not, evaluate both positive and negative role of ethno-stereotype in intercultural communication.

НАНЕ МОВСИСЯН - АНАЛИЗ ЭТНОКУЛЬТУРНЫХ СТЕРЕОТИПОВ ПРИ ПРЕПОДАВАНИИ ПРЕДМЕТА "МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ"

Ключевые слова: *Этностереотипы, межкультурная коммуникация, негативный этностереотип, позитивный этностереотип*

В данной статье рассматривается анализ этностереотипов в рамках предмета "Межкультурная коммуникация". Представляя типы этностереотипов, делается акцент на методах изучения данной темы. Обратившись к автостереотипам и гетеростереотипам и выделив положительные, отрицательные и нейтральные черты, показываются их примеры не только в лингвист-

тике и литературе, но и в искусстве. В статье подчеркивается, что в процессе преподавания темы «этностереотипы» необходимо представить их в контексте живописи, литературы, кинематографии, истории музыки, выявить культурные особенности, подчеркнуть важность лингвистической стороны этностереотипов - языкового мышления, с точки зрения формирования этнонимов и т.д. Выдвигается точка зрения, что благодаря методу диалога и ролевому распределению, у студента формируется более глубокое представление о этностереотипах, и он может четко отличить стереотип от этностереотипа, определить, отражает ли этностереотип психологию данной нации или нет, оценить как положительную, так и отрицательную роль этностереотипов в межкультурной коммуникации.

ՀՏԴ 37.012

DOI: 10.51307/182931072015233260-22.61-63

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂԻԿՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածը ներկայացնում է «մասնագիտական կարողունակություն» հասկացության էվոլյուցիան՝ սկսած զուտ գիտելիքային սահմանումներից մինչև անձնական որակները և մասնագիտական ինքնանդադարները ներառող սահմանումներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևակերպված մասնագիտական կարողունակություններն են կրթության և ոլորտային արդյունաբերության միջերեսը, այն է՝ փոխգործակցության հատման կետը, հոդվածը նաև ներկայացնում է մասնագիտական գրականությունում ներկայացված սահմանումների բազմազանության վերլուծությունը՝ որոշարկելով բարձրագույն կրթության ոլորտում հաճախ կիրառվող այս հասկացության բաղադրիչները: Այս բաղադրիչները կարող են հիմք հանդիսանալ մասնագիտական կրթությունում դասավանդման և ուսումնառության բովանդակության որոշարկման համար: Հատկանշական է, որ դիտարկված սահմանումների վերլուծությամբ առանձնացված անհատական որակներն արդեն հղում են անում մի շարք սուբյեկտիվ գործոնների, որոնք նույնպես պետք է կարևորվեն մասնագիտական կրթությունում:

Հիմնաբառեր՝ մասնագիտական կարողունակություն, գիտելիք, ոլորտային գիտելիք, հմտություն, մոտիվացիա, անձնական որակ, մասնագիտական որակ:

Ներածություն: «Մասնագիտական կարողունակություն» հասկացությունը հարաբերականորեն մեծ ինտենսիվությամբ իմաստավորվել և սահմանվել է վաղ 2000-ականներից սկսած՝ շարունակելով Բոլոնյան գործընթացով պայմանավորված զարգացումները և ձգտելով տարբեր երկրների կրթահամակարգերի և կրթության բովանդակության ներդաշնա-

կեցմանը և կրթություն–աշխատուժ–աշխատաշուկա–արդյունաբերություն փոխահարբերությունների բովանդակային խթանմանն ու ճանաչելիությանը: Հայաստանյան իրականությունում բարձրագույն կրթության և արդյունաբերության միջև փոխհարբերությունների դժվարությունները պայմանավորված են մի շարք գործոններով, այդ թվում՝ մասնագիտական միությունների կամ ասոցիացիաների բացակայությամբ, ինչը հանգեցնում է կոնկրետ աշխատանքի համար իրական միջավայրում անհրաժեշտ մասնագիտական կարողունակությունների և դրա բաղադրիչների որոշարկման դժվարություններին և դրանց վերացման ուղղությամբ կրթության ոլորտում տարվող աշխատանքում երևան եկող մարտահրավերների:

Մասնագիտական կարողունակությունների ավելի խորքային և մանրակրկիտ տրոհումը տարբեր բաղադրիչների, ինչպես նաև դրանց ճանաչումն ու հասցեագրումը մասնագիտական կրթության բովանդակությունում առանցքային նշանակություն ունի արդյունաբերության համար որակյալ աշխատուժի պատրաստման գործում:

Ուստի, սույն հոդվածում ներկայացված հետազոտության նպատակը առկա մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մասնագիտական կարողունակությունների սահմանումների ուսումնասիրությունն ու դրանցում ներառված բաղադրիչների վերհանումն է:

Այս նպատակին հետամուտ՝ հոդվածում ներկայացվում և համեմատվում են մասնագիտական գրականությունում առկա սահմանումները՝ համադրելով դրանցում ներառված այն բաղադրիչները, որոնք հիմք են հանդիսանում մասնագետների որակավորումների ձևակերպումների համար:

«Մասնագիտական կարողունակություն» հասկացությունը: Տեսական գրականությունում ներկայացված սահմանումները մասնագիտական կարողունակությունը բնորոշում են որպես՝

- մարդու սոցիալական և մասնագիտական գործունեությամբ պայմանավորված **անձնական փորձ և գիտելիքներ**, որոնց հիման վրա մարդը ունակ է գործի դնել իր **կարողությունները՝ որպես մասնագիտական իրազեկության, էրուդիցիայի, սոցիալական և մասնագիտական փորձի իրացման մեկտեղում** (Зимняя 2004:15-16),
- **մասնագիտական հմտությունների, գիտելիքների տիրապետում**, ինչպես նաև **մասնագիտական գործունեության ծավալում** (Зееп 2011:10-15),
- **մասնագետի ընդունակությունն է**, որն անհրաժեշտ է որոշակի կոնկրետ առարկայական բնագավառում **կոնկրետ գործողություն կատարելու**

րելու համար՝ ներառյալ նեղ մասնագիտական գիտելիքները, յուրահատուկ առարկայական հմտությունները, մտածողության ձևերը, գործողությունների համապատասխանության գիտակցումը (Равен 2002:281-296),

- աշխատակիցներին անհրաժեշտ **մասնագիտացված գիտելիքներն ու հմտությունները՝** արտադրական գործունեության մեջ աշխատանքային խնդիրների արդյունավետ լուծման համար» (Мальцева),
- տարբեր բաղադրիչների **ինտեգրմամբ ձևավորած անհատական որակ,** որը բնութագրում է այն շրջանավարտին, որը պատրաստ է իրացնել իր ներուժը **մասնագիտական գործունեության մեջ»** (George 2016:6),
- **անհատական որակ** և կոնկրետ մասնագիտական խնդիրներին ուղղված գործունեության համար անհրաժեշտ **գիտելիքների, հմտությունների և կարողությունների շարք** (Данилова 2016:8),
- **մասնագիտական և անհատական-գործնական բնութագրերի ամբողջություն,** որն անհրաժեշտ է որոշակի գործունեության շրջանակներում **կոնկրետ խնդիրների արդյունավետ լուծմանն** ուղղված բարձրորակ արդյունքի ձգտելու գործընթացում» (Кобзева 2018:40),
- պաշտոնյայի՝ սեփական **գործառույթները որակյալ կերպով կատարելու և առկա խնդիրները լուծելու** համար անհրաժեշտ կարողությունները, տվյալ անձի իրավասության դրսևորումը՝ կոնկրետ կազմակերպչական կառուցվածքի և ըստ այդ կառուցվածքի աշխատանքի բաժանման ու գործառույթների բաշխման շրջանակներում (Абрамова 2010:8):
- մասնագիտության **տեխնիկական և էթիկական ստանդարտով սահմանված որակյալ ծառայությունների** տրամադրման համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ամբողջությունը, ինչպես նաև մասնագիտական պարտականությունների ստանձնման և **հանրային շահին ծառայելու** համար անհրաժեշտ գիտելիքներն ու փորձը (<https://www.lawinsider.com/dictionary/professional-competence>):

Ոլորտային գիտական գրականությունում բերված բազմապիսի այս սահմանումների ընտրանու՝ առանձնացված հիմնաբառերի վերլուծությունը ի ցույց է դնում մոտեցումների և ընկալումների ընդհանրությունները՝ որոշ, սակայն ոչ նշանակալի տարբերություններով:

Այսպիսով՝ **մասնագիտական կարողունակությունը մասնագիտական գիտելիքների, հմտությունների, կարողությունների, ունակությունների, փորձի, մասնագիտական և անհատական բնութագրերի այն ամբողջ-**

ջությունն են, որն ուղղված է մասնագիտական գործունեության ընթացքում կոնկրետ խնդիրների արդյունավետ լուծմանը: Ընդ որում, հատկանշական է, որ անգլալեզու գրականությունում մասնագիտական կարողունակությունների սահմանումներում ընդգծվում են ինչպես հանրային շահի գիտակցումը, այնպես և դրան ծառայելու պատասխանատվությունը, մասնագիտական կազմակերպությունների կամ ասոցիացիաների կողմից սահմանված մասնագիտական ստանդարտները՝ որպես ուղենիշ և աշխատակցին ներկայացվող պահանջ:

Մասնագիտական կարողունակությունները միասեռ և միատարր չեն: Դրանք առանձնանում են բազմաբաղադրիչ կառուցվածքով: Կախված տրոհման մակարդակից՝ կարելի է առանձնացնել ընդգրկունությամբ տարբերվող կարողունակություններ, որոնց կառուցվածքային բաղադրիչները քանակականապես կտարբերվեն:

Մասնագիտական կարողունակությունների բաղադրիչներն ու համեմատական վերլուծությունը: Մասնագիտական գրականության մեջ նախաձեռնվել են մի շարք անհատական փորձեր՝ պարզելու մասնագիտական կարողունակությունների կառուցվածքային բաղադրիչները, դրանց քանակն ու բովանդակային առանձնահատկությունները: Ըստ այդ հետազոտությունների՝ մասնագիտական կարողունակությունների կառուցվածքում ընդգրկված տարրերի թիվը տատանվում է 3-5-ի միջակայքում:

Հատկանշական է, որ Օ. Նորուզին, Ա. Վայնբերգերը, Հ. Բիմանսը, Մ. Մուլդերը և Մ. Չիգարին (2012) մասնագիտական կարողունակության բաղադրիչները սահմանափակել են գիտելիքի տեսակների տարաբաժանմամբ, ինչն անուղղակիորեն վկայում է այն մասին, որ հեղինակների այս խումբը, դեռևս 2012թ. մասնագիտական կարողունակություն ասելով, հասկանում էր գիտելիքը և գիտելիքի հետ մետաճանաչողական գործունեությունը: Գիտելիքը՝ որպես մասնագիտական կարողունակություն, այս հեղինակները (2012:79-106) բաժանում են հետևյալ բաղադրիչների՝

- բազմապիսի, արդյունավետ մասնագիտական գործունեության իրականացման համար բավարար ծավալի գիտելիք,
- գիտելիքի կազմակերպման և կառուցման համակարգ, տարրերի միջև իրական կապերի մասին իրազեկություն, գիտելիքի տարրերի դասակարգման կարողություն,
- գիտելիքին կառուցվածք հաղորդելու կարողություն, հիմնական հանգուցային տարրերի ընդգծում,

- տարբեր ոլորտների գիտելիքների միջև հարաբերությունների և մասնագիտական գործունեության ընթացքում դրանց տեսակարար կշռի որոշարկում, օբյեկտիվ փաստերի ազդեցությամբ գիտելիքի թե՛ բովանդակության, թե՛ ոլորտային այլ գիտելիքների հետ համակցումների արդիականացման հնարավորությունը,
- հիմնարար գիտելիք, որը որոշում է ընդհանուր սկզբունքների և գաղափարների դերը,
- մեթոդականություն, պրագմատիզմ, կապերի շարունակականություն՝ «գիտելիքից գործունեություն» տիրույթում,
- գիտելիքի անդրադարձումը:

Այլ հեղինակներ մասնագիտական կարողունակությունների բաղադրիչների տիրույթը ավելի լայն են դիտարկում՝ չսահմանափակվելով միայն գիտելիքով և գիտելիքի հետ մետաճանաչողական գործողություններով: Այս հեղինակները դիտարկում են ինչպես բուն մասնագիտական-առարկայական գիտելիքը, այնպես և անհատական տարբեր որակները, որոնք նախապայման են հանդիսանում արդյունավետ մասնագիտական գործունեության համար:

Օրինակ՝ Ն.Ի.Կոբզևան պնդում է, որ մասնագիտական կարողունակությունների ձևավորումը հնարավոր է միայն հետևյալ տարրերի առկայության դեպքում.

- իմացաբանական ցուցիչ, որը ենթադրում է որոշակի մակարդակի գիտական-պրակտիկ գիտելիքների առկայություն,
- արժեքանական ցուցիչ, որը ենթադրում է անձի ունեցած արժեհամակարգային և մոտիվացիոն կողմնորոշումը,
- գործնական ցուցիչ, որը ենթադրում է անձի՝ գործնական, արդյունավետ գործունեություն ծավալելու ունակությունը (Кобзева 2018:40):

Ըստ Տ.Մ. Շամսուտդինովայի՝ մասնագիտական կարողունակությունները ներկայանում են չորս կառուցվածքային տարրերով՝ 1) մոտիվացիոն (հոգեբանական), 2) հասկացական-բովանդակային, 3) գործնական, 4) ինքնաանդրադարձային (ռեֆլեկտիվ)՝ ուղղված սովորողի կրթության և ինքնակրթության զարգացմանը (Шамсутдинова 2013:37):

Մասնագիտական կարողունակությունների կառուցվածքում նմանատիպ մի շարք տարրեր է առանձնացրել նաև Ի.Վ.Գեորգեն (2016:14)՝

1. մոտիվացիոն. այս տարրը ենթադրում է ապագա մասնագետի անձնական վերաբերմունքը իր մասնագիտական ոլորտի նկատմամբ, նրա

շարժառիթները, նպատակները և հետաքրքրությունների շրջանակը: Այս տարրը ներառում է անձի հուզական, կամային գործունեությունը, օրինակ՝ դրական հուզական ֆոնը և դրական վերաբերմունքը, հաջողության և ձախողման նկատմամբ համարժեք արձագանքի դրսևորումը, հուզականությունը, դրական վերաբերմունքը, մասնագիտական ինքնազարգացումը, ինքնակրթությունը, ինքնակատարելագործումը և այլն,

2. ճանաչողական. այս բաղադրիչը ներառում է կարողունակության բովանդակության իմացությունն ու ըմբռնումը, դրա փոխհարաբերությունների գիտակցումը այլ բաղադրիչների և կարողունակությունների հետ,
3. գործնական. արտացոլում է ապագա մասնագետների հմտությունների և կարողությունների մակարդակը, ինչպիսիք են՝ ընդհանուր մասնագիտական (կրթական, հաղորդակցական, ռեֆլեկտիվ և այլն) և հատուկ հմտությունները (գործնական հմտություններ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, խնդիրների լուծման մեթոդների իմացություն և կիրառում, բարդության տարբեր մակարդակների կրթական և մասնագիտական առաջադրանքների կատարում), ինչպես նաև առկա հմտություններն արդյունավետ օգտագործելու կարողություն և հետագա զարգացման, մասնագիտական գործունեության կատարելագործման հմտությունների առկայություն,
4. անձնային. այս բաղադրիչը բաղկացած է անհատական-հոգեբանական բնութագրերի ամբողջությունից, որն ազդում է անհատի գործունեության վրա,
5. ինքնաանդրադարձող. այս բաղադրիչը արտացոլում է անձի ինքնագնահատման ունակությունը, ինքնատիրապետումը, ուսման և զարգացման ինքնագնահատումը, մասնագիտական կարողունակության ձևավորման արդյունավետության իմաստավորումը:

Մասնագիտական կարողունակությունների կառուցվածքում նույնաքանակ բաղադրիչներ է հատկորոշել նաև Մ.Գ.Իլյազովան (2001:50)՝ առանձնացնելով կարողունակությունների հետևյալ կառուցվածքային տարրերը.

1. մասնագիտական գործունեության արժեքային և բովանդակային հիմքը (պատասխանատվություն մասնագիտական գործունեության արդյունքների համար),
2. գործունեության մոտիվացիոն հիմքը (կարիքներ, շարժառիթներ, ուղղվածություն),

3. անհատական-հոգեբանական հիմքը (կոնկրետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ունակությունները),
4. գործիքային հիմքը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, փորձ);
5. կոնատիվ հիմքը (գործունեության ինքնակարգավորման գործընթացում մասնագետի կարողունակության իրագործման մեխանիզմ):

Պ. Սանտոսոն, Ա. Պուրվանտոն, Մ. Ասբարին (2020) հատկորոշել են մասնագիտական կարողունակությունների հետևյալ չորս բաղադրիչները, մասնավորապես՝

1. մոտիվացիոն, որը ենթադրում է հաստատականության որակներ, նպատակաուղղվածություն, ինչպես նաև մասնագիտական կարողունակության իրացման սկզբնական արժեքներ, միջանձնային շփումներ, կոլեկտիվում գերակա դիրքի ձեռքբերում,
2. գործառության, այն է՝ մասնագիտական գործունեության ծավալման համար անհրաժեշտ իրազեկություն, գիտելիք, փորձ,
3. հաղորդակցական, որն իրացվում է մտքերի հստակ արտահայտման, համոզման, փաստարկման, միջանձնային հաղորդակցության դրսևորումներով,
4. ստեղծագործական և նախաձեռնողական, ընդ որում, այստեղ տեսակի ներքո հեղինակներն առանձնացնում են նաև ներհայեցումը:

Կ. Կացարոսը, Ա. Տիրկասը և Գ. Կոստան (2020) մասնագիտական կարողունակությունների կառուցվածքում տարբերակել են հինգ բաղադրիչներ, որոնք իրենց հերթին հնարավոր է տարաբաժանել ենթաբաղադրիչների՝

1. մասնագիտական գործունեության ժամանակ ինտեգրման համար կարևոր հատկանիշ, որի բաղադրիչներն են՝ հուզական կայունությունը (հարմարվողականությունը), էքստրավերտությունը (արդյունավետ առաջնորդությունը), խոսքի հմտությունները, նրբանկատությունը,
2. անհրաժեշտ կարողունակության մասին տեղեկություններն ու համակողմանի պատկերացումը,
3. կարգավորման կարողունակությունը, որը ենթադրում է սեփական վարքի վերահսկման կարողություն. ընդ որում, էթիկական արժեքները գործունեության հիմնական որոշիչ գործոններն են,

4. մտավոր կարողունակությունը համարվում է վերլուծական, սինթեզման, համեմատության, վերացարկման, ընդհանրացման, կոնկրետացման հմտությունների համախումբ, այսինքն՝ մտավոր որակ, որտեղ դիտարկվում են համանմանությունների դուրսբերման, մտքի ճկունության և մտածողության քննականության աստիճանները,
5. գործառնական կարողունակությունները որոշարկվում են հմտությունների այնպիսի համախմբով, որն անհրաժեշտ է մասնագիտական գործունեության իրականացման համար. այդպիսի հմտություններն են կանխատեսումները, նախագծումը, կազմակերպչական գործունեությունը, իմպրովիզը, փորձագիտական գործունեությունը:

Մ. Մարեքը և այլք (2020) կարծում են, որ կան մասնագիտական կարողունակությունների երեք ոլորտներ՝

- մոտիվացիոն (շարժառիթներ, վերաբերմունքներ, կողմնորոշումներ), ինչն ապահովում է ընդհանուր մշակութային, անձնական, մոտիվացիոն և սոցիալական կարողունակության ձևակերպումը,
- տեխնոլոգիական, ինչը նպաստում է մասնագիտական կարողունակությունների որոշ ենթատեսակների զարգացմանը՝ մեթոդական, գործնական-գործառնական, դիդակտիկ-մեթոդական, հատուկ գիտակարգին վերաբերող, տնտեսական, իրավաբանական, բնապահպանական, տեղեկատվական, կառավարչական, հաղորդակցական,
- ինքնակարգավորման ոլորտներ, զարգացնում է հոգեբանական կարողունակությունն ու ինքնակարողունակությունը:

Գ.Օշիրովը (2016) մասնագիտական կարողունակության բովանդակության մեջ առանձնացնում է հետևյալ բաղադրիչները՝

- հարմարվողական-քաղաքակրթական,
- սոցիալ-կազմակերպչական,
- առարկայական-մեթոդաբանական,
- հաղորդակցական,
- արժեքանական:

Եզրակացություն: Այսպիսով՝ գոյություն ունեցող գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնագիտական կարողունակության ընկալումն արդեն դուրս է եկել բուն մասնագիտական, ոլորտային գիտելիքի և այդ գիտելիքի հետ մետաճանաչողական ձեռածությունների տիրույթից և ենթադրում է ավելի լայն հաղորդակցական, արժեքային, սոցիալ-կազմակերպչական և այլ բաղադրիչների առկայություն, որոնք կազմում են բոլոր մասնա-

գիտական կարողունակությունների հենքը և փոխանցելի են մասնագիտությունից մասնագիտություն: Հատկանշական է տարբեր տեսություններում մոտիվացիային, պատասխանատվությանը և անձնական որակներին արվող հղումների նույնականությունը, ինչը վկայում է այն մասին, որ մասնագիտական կարողունակությունների համակազմում առկա են նաև անհատական գործոնով և անձին վերաբերելի հանգամանքներով պայմանավորված սուբյեկտիվ տարրեր, որոք հաճախ հաշվի չեն առնվում մասնագիտական ուսուցման բովանդակությունը ձևավորելիս: Այսպիսով՝ մասնագիտական հանրույթի հետ մասնագիտական կարողունակությունների քննարկման արդյունքում դրանց հստակ համակազմի սահմանումն ու ճանաչումը կարևոր նախապայման է մասնագիտական կրթության բովանդակության նախագծման համար, որը պետք է հաշվի առնի նաև սուբյեկտիվ գործոններն ու հանգամանքները՝ անհատական կամ անձնական մակարդակում աշխարհայացքային կամ անհատական-հոգեբանական պրոֆիլավորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Абрамова Н.М. Формирование профессиональной компетентности государственных служащих в условиях инновационно-экономического развития: автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. – Москва: Научная библиотека КГУ, 2010
2. Георге И.В. Формирование профессиональных компетенций студентов образовательных организаций высшего образования на основе организации самостоятельной работы: монография / И. В. Георге. – Тюмень: ТИУ, 2016
3. Данилова А. С. Основы профессиональной компетенции: учебное пособие / А. С. Данилова, С. В. Здрестова-Захаренкова, О. М. Федорова; Сиб. федер. ун-т, Торг.-эконом. ин-т. - Красноярск: СФУ, 2016
4. Зеер Э.ф. Психология профессионального развития: методология, теория, практика, Екатеринбург, 2011. — 160 с

5. Зимняя И.А. Ключевые компетентности как результативно-целевая основа компетентностного подхода в образовании: авторская версия /М.: Исслед. центр проблем качества подготовки специалистов, 2004. – 40 с
6. Ильязова М.Д. Инварианты профессиональной компетентности: сущность и структура // Педагогика и психология образования, Москва 2011
- Краевский, В.В. Методология педагогики: Пособие для педагогаисследователей.–Чебоксары: Изд-во Чуваш. ун-та, 2001. – 244 с.
7. Кобзева Н.И. Профессиональные компетенции в контексте компетентностно-ориентированного подхода в образовании // Вестник Оренбургского государственного университета, Оренбург 2018 №5 (217)
8. Мальцева К., Профессиональные компетенции на практике // <http://www.hrmedia.ru/node/1626>
9. Равен Дж. - Компетентность в современном обществе, М. 2002, 396с.
10. Шамсутдинова Т.М. Формирование профессиональных компетенций студентов в контексте информатизации высшего образования // Открытое образование №6, Москва 2013
11. Asbari, M., Purwanto, A., & Santoso, P. B. Influence of Leadership, Motivation, Competence, Commitment and Culture on ISO 9001:2015 Performance in Packaging Industry. Scholars Journal of Economics, Business and Management, 2019, 6(12), 577– 582
12. Katsaros, K. K., Tsirikas, A. N., & Kosta, G. C. The impact of leadership on firm financial performance: the mediating role of employees' readiness to change. Leadership & Organization Development Journal, 2020, 41(3), 333–347
13. Marek, M. & WU, Wen-Chi & Chew, Chiou Sheng. Teacher Experiences in Converting Classes to Distance Learning in the COVID-19 Pandemic. International Journal of Distance Education Technologies, 2020, 40-60
14. Noroozi O., Weinberger A., Biemans, H.J.A., Mulder M., & Chizari M. Argumentation-based computer supported collaborative learning (ABCSCCL). A systematic review and synthesis of fifteen years of research. Educational Research Review, 2012, 7(2), pp. 79-106.
15. Ochirov, G. Formation of professional competence of the future teachers of initial classes by student teaching means. Historical and social-educational ideas, 2016, 8, 205-208
16. Professional Competence Definitions/
<https://www.lawinsider.com/dictionary/professional-competence>

REFERENCE

1. Abramova N.M. Formirovanie professional'noj kompetentnosti gosudarstvennyh sluzhashchih v uslovijah innovacionno-jekonomicheskogo razvitija: avtoreferat dissertacii na soiskanie uchenoj stepeni kandidata jekonomicheskikh nauk. – Moskva: Nauchnaja biblioteka KGU, 2010
2. George I.V. Formirovanie professional'nyh kompetencij studentov obrazovatel'nyh organizacij vysshego obrazovanija na osnove organizacii samostojatel'noj raboty: monografija / I. V. George. – Tjumen': TIU, 2016
3. Danilova A. S. Osnovy professional'noj kompetencii: uchebnoe posobie / A. S. Danilova, S. V. Zdrestova-Zaharenkova, O. M. Fedorova; Sib. feder. un-t, Torg.-jekonom. in-t. - Krasnojarsk: SFU, 2016
4. Zeer Je.f. Psihologija professional'nogo razvitija: metodologija, teorija, praktika, Ekaterinburg, 2011. — 160 s
5. Zimnjaja I.A. Ključevye kompetentnosti kak rezul'tativno-celevaja osnova kompetentnostnogo podhoda v obrazovanii: avtorskaja versija /M.: Issled. centr problem kachestva podgotovki specialistov, 2004. – 40 s
6. Il'jazova M.D. Invarianty professional'noj kompetentnosti: sushhnost' i struktura // Pedagogika i psihologija obrazovanija, Moskva 2011Kraevskij, V.V. Metodologija pedagogiki: Posobie dlja pedagogoissledovatelej. – Cheboksary: Izd-vo Chuvash. un-ta, 2001. – 244 s.
7. Kobzeva N.I. Professional'nye kompetencii v kontekste kompetentnostno-orientirovannogo podhoda v obrazovanii // Vestnik Orenburgskogo gosudarstvennogo universiteta, Orenburg 2018 №5 (217)
8. Mal'ceva K., Professional'nye kompetencii na praktike // <http://www.hrmedia.ru/node/1626>
9. Raven Dzh. - Kompetentnost' v sovremennom obshhestve, M. 2002, 396s.
10. Shamsutdinova T.M. Formirovanie professional'nyh kompetencij studentov v kontekste informatizacii vysshego obrazovanija // Otkrytoe obrazovanie №6, Moskva 2013

TATEVIK SOGIKYAN - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОСТАВНЫХ ЭЛЕМЕНТОВ ПОНЯТИЯ "ПРОФЕССИОНАЛЬНАЯ КОМПЕТЕНЦИЯ"

Ключевые слова: профессиональная компетенция, знание, мотивация, личностные качества, профессиональные качества.

В данной статье представлена эволюция понятия «профессиональная компетенция» от чисто когнитивных определений до определений включающих в себя личностные качества и профессиональные саморефлексии. Учитывая тот факт, что сформулированные профессиональные компетенции образование и интерфэйс отраслевой промышленности, это точка пересечения взаимодействия, в статье также представлен анализ перевода разнообразий определений профессиональной литературы, определяя часто используемые в сфере образования составные элементы понятия. Эти составные элементы в области образования могут являться основой для определения преподавания и содержания образования.

При анализе рассматриваемых понятий индивидуальные качества ссылаются на ряд субъективных факторов, которые также должны быть важными в профессиональном образовании.

TATEVIK SOGHIKYAN - COMPARATIVE ANALYSIS OF DEFINITIONS AND CONSTITUENTS OF THE "PROFESSIONAL COMPETENCE" CONCEPT

Keywords: professional competence, knowledge, sectoral knowledge, skill, motivation, personal qualities, professional qualities

This article presents the evolution of the "professional competence" concept, based on its definitions ranging from references to pure knowledge to the ones that consider personal qualities and professional reflection. Properly formulated competence descriptors serve as an interface between education and sectoral industries, hence predetermining their interrelations. Hereby, this article also contains an analysis of the definitions, circulating in the field literature, at the same time identifying the components of this concept that is widely used in higher education. These components may serve as a basis for the

identification of teaching and learning content in higher education. It should be noted that the analysis of the reviewed definitions highlighted the “personal qualities” component, containing a number of subjective factors which should also be prioritized in professional education.

ՀՏԴ 373 (479.25)

DOI: 10.51307/182931072015233260-22.61-76

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԿԱՐԵՆ
ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԴՊՐՈՑԻ և ՈՒՍՈՒՑԶԻ ՄԱՍԻՆ**

ԱԻՂԱ ԹՈՓՈՒՋՅԱՆ

Համառոտագիր

2022 թ. լրանում է ՀՀ Ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի ծննդյան 90-ամյակը: Մարդ, ով 1974-1988 թթ. ղեկավարել է մեր հանրապետությունը և ում համար մանկավարժական աշխատանքը, դպրոցական կրթությունն ու դաստիարակությունը բարձրագույն արժեքներ են եղել: Հոգվածում հակիրճ ներկայացված են 1978 թ. հունիսին տեղի ունեցած ուսուցիչների հանրապետական 4-րդ համագումարի նյութերը, այդ ժամանակի Ժողովրդական կրթության առջև դրված պահանջներն ու հիմնախնդիրները, վերլուծված են Կ.Դեմիրճյանի մոտեցումներն ու գաղափարները դրանց լուծման ուղիների, ուսուցչի կերպարի ու դպրոցի վարկի բարձրացման, մանկավարժական գիտությունը և մանկավարժական կադրերի պատրաստման գործընթացները զարգացնելու և արդիականացնելու ուղղությամբ: Արդյունքում՝ բացահայտվել, վերլուծվել և ներկայացվել են Կ.Դեմիրճյանի մանկավարժական այն հայացքներն ու դրույթները, որոնք այսօր էլ արդիական են և մեծապես կարող են օգտակար լինել ժամանակակից հայ դպրոցին, ուսուցչին և կրթության կազմակերպիչներին:

Հիմնաբառեր՝ ժողովրդական կրթություն, ուսուցիչ, դպրոցական դաստիարակություն, մանկավարժական գիտություն:

Ներածություն: Հետազոտության արդիականությունը և նորույթը պայմանավորված է նրանով, որ առաջին անգամ փորձ է արվում մեր նորագույն պատմության երևելի դեմքի, Ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի մանկավարժական հայացքների բացահայտման միջոցով գտնել ժամանակակից կրթությանը վերաբերող կարևոր հարցերի պատասխաններ և նրա պրակտիկ գործունեության վերլուծության ճանապարհով կերտել մեծ հայորդու

նկարագիրը, որը դաստիարակչական հզոր միջոց կարող է դառնալ հետագա բոլոր հայ սերունդների համար:

Հեղազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հարստացնում է մանկավարժության տեսությունն ու պատմությունը: Երկրի քաղաքական ղեկավարի պրակտիկ գործունեության, մտքերի, գաղափարների, մոտեցումների վերլուծության հիման վրա բացահայտված նրա մանկավարժական հայացքները կարող են օգտակար լինել կրթության բնագավառի կազմակերպիչներին, ուսուցիչներին, դպրոցի տնօրեններին, աշակերտների ծնողներին և դաստիարակության ու կրթության հարցերով զբաղվողներին:

Հեղազոտության նպատակը՝ կրթության, դպրոցի, ուսուցչի մասին Կ.Դեմիրճյանի մտքերի, գաղափարների ու մոտեցումների վերլուծությունն ու այսօրվա դպրոցին օգտակար և արդիական մանկավարժական հայացքների բացահայտումն է:

Հեղազոտության խնդիրներն են՝ 1. ուսումնասիրել 1978 թ. հունիսին տեղի ունեցած ուսուցիչների հանրապետական 4-րդ համագումարի նյութերը և վերլուծել այդ ժամանակի Ժողովրդական կրթության առջև դրված պահանջներն ու հիմնախնդիրները, 2. Բացահայտել Կ. Դեմիրճյանի «Աճեցնել կոմունիզմի համար մարտնչողների սերունդ» զեկուցման մեջ հնչած կարծիքների, մոտեցումների ու գաղափարների մանկավարժական արժեքը, 3. հիմնավորել Կ. Դեմիրճյանի մանկավարժական հայացքների արդիականությունն ու օգտակարությունը: 4. Բացահայտել սերունդների համար ընդօրինակման արժանի հայրենասեր ազգային հերոսի կերպարը:

Հեղազոտության մեթոդները: Համապատասխան գրականության, մամուլի **վերլուծություն**, գաղափարների, մոտեցումների **համեմատություն** և այսօրվա հետ **համադրում** և դրանց արդիականության և օգտակարության **հիմնավորում**:

Ժողովրդական կրթության հիմնախնդիրները: 20-րդ դարի 70-80-ական թվականներին կրթությունը կոչվում էր **Ժողովրդական կրթություն, որովհետև այն** ամբողջ ժողովրդի ամենօրյա ուշադրության ու հոգատարության կենտրոնում էր: Տնտեսության, մշակույթի յուրաքանչյուր ոլորտ իր կոնկրետ խնդիրներն ու պատասխանատվությունն ուներ կրթության, դպրոցի նկատմամբ: 1974-1988 թթ., երբ Կարեն Դեմիրճյանը Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարն էր, Խորհրդային Հայաստանի կրթության համակարգի առջև ծառայած էին մի շարք կարևոր, ապագային

միտված խնդիրներ: Լուծվում էր պարտադիր 8-ամյա և համընդհանուր միջնակարգ կրթության խնդիրը: Հայաստանում գործող 1337 հանրակրթական դպրոցներից 907-ը կամ դրանց ընդհանուր թվի 67.8 տոկոսը արդեն միջնակարգ էին: Սա խորհրդային միության մասշտաբով բարձր ցուցանիշ էր: Ուսուցիչների հանրապետական 4-րդ համագումարում /1978 թ. հունիս/ Լուսավորության մինիստր Ս.Հախումյանի «Դաստիարակել կոմունիստական հասարակարգի արժանի քաղաքացիներ» թեմայով զեկուցման մեջ նշվում էր.

«Թեև երկրում ստեղծված էին պարտադիր ուսուցումն իրականացնելու բարենպաստ պայմաններ, այնուամենայնիվ, դեռևս ունենք մի շարք թերություններ, որոնք անհապաղ լուծման կարիք ունեն» (Հախումյան 1978): Այդ թերությունների շարքում հատուկ ուշադրություն էր դարձվում դպրոցների բարձր դասարաններում մեծ չափերի հասնող մաղումներին և երկտարեցիների թվին: 1976-77 ուսումնական տարում նույն դասարանում էր մնացել 10230 աշակերտ: Վիճակն ավելի վատ էր 9-10-րդ դասարաններում: Այստեղ յուրաքանչյուր 100 սովորողից 2-ը չէր առաջադիմում՝ դառնալով երկտարեցի: **Խնդիր է դրվում** բարձրացնել ծնողների պատասխանատվությունը երեխաների ուսման և դաստիարակության գործում, ամրապնդել դպրոց-ընտանիք կապը, ծնողներին ավելի ակտիվորեն մասնակից դարձնել դպրոցական կյանքի կազմակերպմանը, բարձրացնել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպման մակարդակն ու երեխաների ընդգրկվածությունը ինֆորմալ կրթությունում, ավելացնել երկարօրյա դպրոցների ու խմբերի ցանցի ընդլայնման տեմպերը, ծնողների շրջանում բացատրական լայն աշխատանք տանել այդ տիպի դպրոցների առավելությունների վերաբերյալ, ամրապնդել գիշերօթիկ, հատուկ և օժանդակ դպրոցների ցանցը, զարգացնել երեկոյան և հեռակա ուսուցումը՝ բարձրացնելով նրա դերը երիտասարդության ընդհանուր միջնակարգ կրթության իրականացման գործում:

Թեև այդ տարիներին Հայաստանի աշակերտության կեսից ավելին սովորում էր տիպային նոր շենքերում, այնուամենայնիվ, «դանդաղում էր դպրոցների և նախադպրոցական մանկական հիմնարկների շինարարությունը, որի պատճառով հանրապետության դպրոցների ավելի քան 36 տոկոսը շարունակում էր աշխատել երկու հերթով, բազմաթիվ երեխաներ զրկված էին մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից» (Հախումյան 1978): Դպրոցաշինությունը դարձավ առաջնահերթ խնդիր: Յուրաքանչյուր ուսումնական տարվա նախօրյակին, օգոստոսին, շինարարներն ու այդ գործի հա-

մար մյուս պատասխանատուները հաշվետվություն էին տալիս իրենց աշխատանքի արդյունքների և որակի մասին:

Հատուկ ուշադրություն էր դարձվում ուսուցման կազմակերպմանն ու բովանդակությանը: Մասնավորապես, ուսուցումը գիտական հիմքերի վրա դնելու խնդիրներին՝ ուսուցման կաբինետային համակարգի, տեխնիկական միջոցների հարստացման, դասագրքերի նորացման, մեթոդական գրականության հրատարակման բարելավման հարցերին: Այդ տարիներին, հանրակրթական դպրոցի 135 անուն դասագրքերից 97-ը ստեղծվում էր Հայաստանում: Այսինքն սին են այն մեղադրանքները, թե իբր բոլոր դասագրքերը թելադրվում էին կենտրոնից: Այո, բնագիտական առարկաների դասագրքերը, հիմնականում գալիս էին Մոսկվայից, դրանք արժեքավոր, գիտության վերջին խոսքի վրա հիմնված դասագրքեր էին, որոնք, ի դեպ, մինչև այսօր էլ շրջանառության մեջ են: Այդ տարիներին մի շարք կոնկրետ միջոցառումներ են իրականացվում կապված պատմության և հասարակագիտության, ռուսաց և օտար լեզուների դասավանդման դրվածքի բարելավման ուղղությամբ: Վերանայվում են բնագիտամաթեմատիկական առարկաների հնարավորությունները՝ դասընթացների տեսական մասի ուսուցումը գործնական կիրառությունների հետ կապելու նպատակով: Պահանջվում է բարձրացնել աշխարհագրություն, նկարչություն, երգեցողություն, ֆիզկուլտուրա, ձեռքի աշխատանք առարկաների, ֆակուլտատիվ դասընթացների դերը սովորողների համակողմանի կրթության ու դաստիարակության գործում և «Հմտորեն օգտվել առաջավոր փորձից, ստեղծել արդյունավետ աշխատելու համընդհանուր մթնոլորտ, պարտականությունների անթերի կատարման խանդավառ տրամադրություն» (Հախումյան 1978):

Մեծ նշանակություն է տրվում ուսուցիչների ստեղծագործական որոնումների խթանման, նրանց մասնագիտական, հոգեբանական և մեթոդամանկավարժական գիտելիքների կատարելագործմանը, ուսուցման գործընթացում տեխնիկական միջոցների և ուսումնադիտողական պարագաների կոմպլեքսային օգտագործմանը, ուսուցման նոր, առավել ակտիվ ձևերի ու մեթոդների լայն կիրառմանը՝ «սովորողների ինքնուրույն մտածողությունը, ստեղծագործական պրպտումները խթանելու, գիտելիքների խորությունն ու կայունությունը ապահովելու, նրանց առաջադիմության մակարդակը բարձրացնելու նպատակով» (Հախումյան 1978):

Իր զարգացման բոլոր փուլերում, խորհրդային հայկական դպրոցն ունեցել է աշխատանքային պոլիտեխնիկական ուղղվածություն: Նրա գլխա-

վոր խնդիրներից մեկը եղել է սովորողներին կյանքի, հասարակական օգտակար աշխատանքի, ապագա մասնագիտությունը գիտակցաբար ընտրելու համար նախապատրաստելը: 1975-1986 թթ. մեծ աշխատանք է կատարվում դպրոցականների աշխատանքային ուսուցման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Խնդիր է դրվում ապահովել դպրոցի վճռական շրջադարձը՝ աշակերտներին նյութական արտադրության ոլորտում աշխատանքի պատրաստելու համար: Յուրաքանչյուր դպրոց ուներ շեֆ ձեռնարկություն: Արտադրական միավորումները, մինիստրությունները այս իմաստով կոչված էին համակողմանիորեն օգնելու դպրոցին: Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկություն սոցիալական զարգացման իր պլաններում երիտասարդության աշխատանքային կոփման ու մասնագիտական կողմնորոշման կոնկրետ միջոցառումներ էր նախատեսում: Արտադրական և գյուղատնտեսական ձեռնարկություններին հանձնարարվում է «բարձր դասարանների աշակերտների աշխատանքային ուսուցումը կազմակերպելու և նրանց մասնագիտական կողմնորոշումը խթանելու նպատակով քաղաքներում ստեղծել միջդպրոցական ուսումնարտադրական կոմբինատներ, ձեռնարկությունների ներսում՝ աշակերտների համար բացել արտադրամասեր ու տեղամասեր, իսկ գյուղական դպրոցներին կից ստեղծել ուսումնափորձնական հողամասեր, աշակերտական արտադրական բրիգադներ: Անհրաժեշտ պայմաններ ապահովել դպրոցականների արտադրական պրակտիկայի և էքսկուրսիաների համար, վարպետ-մասնագետների միջոցով ղեկավարել սովորողների աշխատանքային ուսուցումը: Ընդլայնել աշխատանքի ու հանգստի ճամբարների և աշխատանքային այլ միավորումներիցանցը» (Հախումյան 1978): Այսինքն՝ երկրի ողջ նյութական և հոգևոր ոլորտների հնարավորությունները օգտագործվում էին դպրոցին ծառայելու համար: Իշխում էր «Յուրաքանչյուրս պարտք և պատասխանատվություն ունենք դպրոցի հանդեպ» գաղափարը: Համառոտ՝ այսպիսին էին 1975-1988 թթ. Հայաստանի ժողովրդական կրթության առջև դրված խնդիրները:

Ուսուցիչն ու դպրոցը որպես մնայուն արժեքներ: Կարեն Դեմիրճյան քաղաքական գործչի համար կրթությունը, դպրոցը, երեխան, ուսուցիչը մշտապես եղել են բարձրագույն արժեքներ: Կրթության մասին իր մանկավարժական հայացքները ամփոփված են, հիմնականում, ուսուցիչների հանրապետական 4-րդ համագումարի «Աճեցնել կոմունիզմի համար մարտնչողների սերունդ» զեկույցում /1978 թ. հունիս/, որտեղ նա իրավացիորեն բարձր է գնահատել խորհրդային կրթության դերը երկրի զարգացման գործում:

«Ժողովրդական կրթության այդպիսի առաջավոր, միլիոնների շահերից բխող սիստեմ՝ պատմությունը չի իմացել և չէր կարող իմանալ: Ամենախիստ ուսուցիչը՝ պատմությունը, ժողովրդական կրթություն առարկայից մեր երկրին նշանակել է ամենաբարձր թվանշանը» (Դեմիրճյան 1978): **Սա մի գնահատական է, որն անկախություն ստանալուց հետո մանավանդ այսօր, հաճախ է կրկնվում:** Մեր իմաստուն ղեկավարը խորհրդային դպրոցի տարբերիչ հատկանիշն է համարում այն, որ խորհրդային մանկավարժությունն «ուսուցումը և դաստիարակումը դիտում է որպես միասնական, դիալեկտիկորեն անխզելի պրոցես: Մատաղ սերնդի դաստիարակությունը բարդ ու դժվարին գործ է, վերին աստիճանի նուրբ արվեստ: Ստեղծագործական ամեն մի այլ գործի նման նա զարգանում է, կատարելագործվում» (Դեմիրճյան 1978):

Պատմությունը ցույց տվեց, որքան ճշմարիտ էր այդ գնահատականը: **Ցավոք, մեզանում ոչ բոլորն են զգում և հասկանում այս նրբությունը:** Ավելին, վերջին տարիներին տուրք տալով անգլերենին, որտեղ դաստիարակություն բառը բացակայում է, երկրորդական պլան մղեցինք այն և մանկավարժության կարևոր երկու հասկացությունները ամփոփեցինք մեկ՝ կրթություն հասկացության մեջ: Բովանդակային առումով սա մեծագույն սխալ էր, որի հետևանքները մենք արդեն զգում ենք: Անիմաստ կլիներ այս հարցը բարձրացնել, եթե այն չարտահայտվեր պաշտոնական փաստաթղթերում, չստեղծվեին տարբեր ՀԿ-եր և այլ կառույցներ այն տարածելու համար: Մենք չպետք է մոռանանք, որ դարեր շարունակ պետականագուրկ մեր ժողովրդին 21-րդ դար հասցնողը դաստիարակությունն է եղել, **ընտանիքի, դպրոցի, եկեղեցու դաստիարակությունը:** Դաստիարակությունը վերաբերումնք է, որից ձևավորվում են գաղափարներն ու համոզմունքները, դաստիարակությունն է մարդու մեջ արժեքներ ու անձնային որակներ ձևավորողը: Արդյո՞ք բոլոր բարձրագույն կրթություն ունեցողները կարող են գիտական դպրոցներ ստեղծել: Արդյո՞ք բոլոր լավ մասնագետները կարող են հաղորդակցվել, շփվել, ազդել ուրիշների վրա կամ դիմացինին հաղորդել իրենց իմացածը, առավել, նրան օգնել սեփական գիտելիքները կարողության ու հմտության վերածելու գործում: Այստեղ տեղին է հիշել Կարեն Սերոբիչի հետևյալ միտքը «Չպետք է մոռանալ, որ երբեմն մարդը կարող է ունենալ կրթություն, գիտելիքներ, բայց միևնույն ժամանակ լինել ոչ բարեկիրթ: Կյանքում նմանօրինակ մարդիկ ցավոք դեռևս քիչ չեն հանդիպում: Բայց հատկապես տհաճ է, երբ այդպիսի մարդու հանդիպում ես երիտասարդության

շրջանում: Առավել ևս, երբ դրանք հայտնվում են ուսուցչության ասպարեզում» (Դեմիրճյան 1978):

«Գրագիտություն սովորեցնելուց հետո մեծ և բարդ խնդիրը դա բարեկիրթ երեխա դաստիարակելն է: Դպրոցից երեխան պետք է դուրս գա կրթված, բարեկիրթ: Դպրոցից դուրս եկած երեխայից դպրոցի հոտ պետք է գա: Յուրաքանչյուր դպրոց իր տրադիցիաները պետք է ունենա: Յուրաքանչյուր դպրոց յուրովի մարդ պետք է դաստիարակի՝ որ երեխան մինչև իր կյանքի վերջը իր դրական բարեմասնությունները կապի դպրոցի հետ: Դա չենք անում, ուրեմն դպրոց չկա: Դաստիարակության խնդրին հատուկ ուշադրություն է պետք» (Դեմիրճյան 1978):

Իր բոլոր ելույթներում Կարեն Սերոբիչը մշտապես բարձր է գնահատել **ուսուցչի** աշխատանքը: «Մեր ժողովուրդը ուսուցիչներին է վստահել ամենաթանկ բանը՝ իր երեխաներին, նրանց դաստիարակությունը և ուսուցումը: Դաստիարակության ամբողջ գործընթացում գլխավոր, հիմնական, որոշիչ դերը **ուսուցիչն** է: Ուսուցիչն է մեր մեջ ձևավորում **ամենաթանկ զգացումը՝ հայրենիքի հանդեպ ջերմ սերը**: Հենց նա է առաջին հերթին ապահովում ամենապատասխանատու խնդրի կատարումը՝ մարդու, նրա հոգևոր աշխարհի կազմավորումը, հայացքների, համոզմունքների, հավատամքի ձևավորումը: **Մենք բոլորս շատ բանով ենք պարտական դպրոցական դաստիարակությանը, մեր ուսուցիչներին, որոնք մեզ համար օրինակ են ծառայել, բարերար ազդեցություն գործել**» (Դեմիրճյան 1978): Այնուհետև՝ մանկավարժական արդի բառապաշարով ասած Կարեն Սերոբիչը նախագծում է դաստիարակ-ուսուցչի կատարելատիպը: «Այդպիսի ուսուցիչ երևի ամեն մարդու համար մեկն է եղել: Դա եղել է այն ուսուցիչը, որով մենք բոլորից շատ ենք հիացել, հպարտացել, ձգտել ենք նմանվել նրան: Այդպիսի ուսուցիչ կարող էր լինել թե՛ մաթեմատիկայի, թե՛ ֆիզիկայի, թե՛ գրականության և թե՛ պատմության ուսուցիչը: Բայց մի բան անվիճելի է, դա խոր գիտելիքներ, մեծ կամք և ուժեղ բնավորություն ունեցող ուսուցիչ էր, այլ կերպ ասած՝ անհատականություն» (Դեմիրճյան 1978): Ակամա հիշում ես Կ. Ուշինսկուն, ով պնդում էր, որ դաստիարակության ամենակարևոր մասը բնավորության ձևավորումն է, միայն բնավորությամբ կարելի է բնավորություն ձևավորել: Ես այս միտքը կլրացնեի դաստիարակության ամենակարևոր մասը բնավորության, արժեքային համակարգի ձևավորումն է, միայն բնավորությամբ և հարուստ արժեքային համակարգ ունեցող անհատականությունը կարող է անձնային որակներ և արժեքներ ձևավորել:

Մեր հմուտ ղեկավարը մանկավարժի աշխատանքը «տքնություն է» որակում, նրանք «մշակներեն ոչ թե աշխատողներ, նրանք մարդ են ձևավորում»: Դիմելով ուսուցիչներին ասում է, - «Երբ մտածում եմ մանկավարժի աշխատանքի մասին, ասում եմ՝ դա ինժեների աշխատանք չէ, ճարտարապետի, գրողի աշխատանք չէ – դա ամենաբարդ, բայց միաժամանակ ամենաանհրաժեշտ սիմբիոզ աշխատանքն է: Ինժեները մի առարկա ստանալու համար ձևափոխում է դեֆորմացիայի կամ կտրվածքի միջոցով, ինչ-որ կոնֆիգուրացիա է ստանում: Դուք իրավունք չունեք ոչ դեֆորմացնել հոգին, ոչ էլ տաշեղ անել աշակերտին: Բայց պետք է մարդ դաստիարակեք» (Դեմիրճյան 1978): Հետաքրքիրն այն է, որ մանկավարժի աշխատանքին վերաբերող ցանկացած հարցի մասին խոսելիս Կարեն Սերոբիչը այն համեմատում է ինժեների աշխատանքի հետ՝ դրանով ավելի շեշտելով երկրի ապագայի նկատմամբ ուսուցչի պատասխանատվությունն ու սխալվելու անթույլատրելիությունը:

Քաղաքագետ Կ.Դեմիրճյանը հատուկ ուշադրություն էր դարձնում դպրոց-ընտանիք կապի, ծնող-ուսուցիչ համագործակցության ամրապնդմանը: Նա հորդորում է չմոռանալ, որ «ընտանեկան դաստիարակությունը ոչնչով փոխարինել չի կարելի: Ծնողները, որպես կանոն, շատ երեխաների համար վարքի չափանիշ են, որ նրանց ազդեցության տակ երեխաների մեջ մշակվում են բնավորության որոշակի գծեր, կենսահայեցողություն:» Նա ուսուցչի կարևոր գործառույթներից մեկն է համարում **ծնողական կրթության** իրականացման խնդիրը, որն այսօր էլ մեզանում հրատապ խնդիր է: Ծնողների, ուսուցիչների և ավագ դպրոցականների շրջանում անցկացված մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ամենուրեք առկա է ծնողական մոտիվացիայի ցածր մակարդակ: 2020թ. Երևանում և Հայաստանի հինգ տարբեր մարզերում 1500 ավագ դպրոցականների շրջանում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ ծնողների միայն 20 տոկոսի համար էր կարևոր իմանալ, թե ինչ դրդապատճառներով են իրենց երեխաները սովորում, դպրոց գնում: Շատ երեխաներ գտնվում են ծնողական հսկողությունից դուրս: Հատկանշական է, որ ավագ դպրոցականների կեսից ավելին ըմբռնումով, հանդուրժողաբար է վերաբերվում ծնողների անուշադրությանը, գիտակցորեն է մոտենում զբաղվածությանը: «Տանը ձեզ տրվող ամենահաճախակի հարցը որն է» հարցին սովորողների 80 տոկոսը պատասխանել էր «ի՞նչ ես կերել, ի՞նչ ես ստացել, դասերդ արե՞լ ես»: Մինչդեռ երեխաների վկայությամբ հազվադեպ են հնչում «ի՞նչ կա դպրոցում, դասարանում, տխուր ես, թե՞ անտրամադիր, մտահոգ ես, թե՞ հոգնած» հարցերը: Ուստի

շատ տեղին է մեր իմաստուն ղեկավարի հորդորը. «Ուսուցիչը պետք է լավ գիտենա, թե ինչ պայմաններում է ապրում իր աշակերտը, ինչպես է դաստիարակվում ընտանիքում, պետք է օգնի ծնողներին տիրապետելու մանկավարժական անհրաժեշտ գիտելիքների, նրանց թելադրի որպես անձնավորություն ձևավորվելու համար երեխաների վրա ներգործելու ճիշտ ուղիները: Եվ եթե դպրոցում ու ընտանիքում դաստիարակության ջանքերը չեն համընկնում, միասնական չեն, ապա հազիվ թե դրական արդյունքներ սպասվեն: Յուրաքանչյուր ընտանիք պարտավոր է օժանդակել, եռանդագին օգնել դպրոցին, որպեսզի իրենց երեխաներն աճեն որպես իսկական մարդիկ, արժանի քաղաքացիներ: Դպրոցն էլ պետք է հետևողական աշխատանք տանի ծնողների հետ, նրանց տա որոշակի մանկավարժական գիտելիքներ և հմտություններ: Դաստիարակչական աշխատանքներում մեծ արդյունքների կարելի է հասնել միայն դպրոցի, ընտանիքի, հասարակության սերտ համագործակցությամբ» (Դեմիրճյան 1978): Ահա դպրոց-ընտանիք կապի ամրապնդման ժամանակակից սխեման, որը կարծես այսօրվա համար է գրված: Մինչդեռ, այսօր մեզանում տարածված է այն երևույթը, երբ երեխաների դաստիարակության համար պատասխանատվությունը ընտանիքը զցում է դպրոցի վրա, վերջինս էլ ընտանիքի:

Կարեն Սերոբիչի համար Երեխան, սովորողը մանկավարժական գործընթացի գլխավոր անձերից մեկն է, քանզի «Խոսքը վերաբերում է մեր ապագային, երիտասարդ հերթափոխին, այն բանին, թե մենք ինչպես ենք ուսուցանում և դաստիարակում նրանց՝ ովքեր կդառնան երկրի բախտը տնօրինողները, նրա առաջատար ուժը գալիք 21-րդ դարում: Նրանց ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը մեր ապագա վիշտն է: Դա մեր արցունքներն են, մեր հանցանքը ուրիշ մարդկանց հանդեպ, երկրի հանդեպ» (Դեմիրճյան 1978): Մեր խորաթափանց ղեկավարը մեծ նշանակություն է տալիս **մանկավարժական համատեղելիության**, ուսուցիչ-աշակերտ առողջ հարաբերությունների և ամենօրյա համագործակցությունն ապահովող հարցերի հաստատմանը: Հարցեր, որոնք այժմ միջազգային աստիաններում ակտիվորեն քննարկվում են կրթության մինչև 2050 թ. տեսլականի զեկույցներում: «Որպեսզի այդ հարաբերությունները առողջ լինեն ուսուցիչը պետք է **հարգի երեխային** և պահպանի նրա **ինքնատիպությունը**, նրա հետ հավասարապես **հուզվի** և կիսի նրա անհաջողություններն ու ուրախությունները: Մանկավարժը ամեն դասի պետք է գա քննության, ամեն դասարան մտնելուց առաջ պետք է հուզվի: **Եթե չհուզվեց,**

էլ ինչ մանկավարժ:» Այնուհետև զգուշացնում է. «Եթե մենք այստեղ էլ խոտան տանք, էլ մեր հալը ինչ կլինի, բոլոր խոտանների հիմքը դպրոցից է: Էն երեխան, որ լավ ուսուցչի ձեռքի տակ է ձևավորվել, չի կարող պատահի, որ վերջում փչանա: Այն երեխան, որը չի դաստիարակվել, շատ դժվարությամբ է դաստիարակվում հետո (Դեմիրճյան 1978):

Արդիական են նաև Կարեն Սերոբիչի մտքերը **դասին ներկայացվող պահանջների մասին**. «Ամեն մի դաս պետք է նպաստի աշակերտների ճանաչողական ակտիվության զարգացմանը, իրենց գիտելիքները **ինքնուրույնաբար լրացնելու** կարողության զարգացմանը, որ սովորողները, իրոք, դառնան **ուսուցման մասնակիցը**, ձեռք բերեն այն ամենակարևորն ու անհրաժեշտը, որով պետք է կյանք մտնեն: Մանկավարժության **գերխնդիրը** պետք է համարել **ինքնուրույնության և պատասխանատվության համատեղ դաստիարակությունը** (Դեմիրճյան 1978):

Այսինքն՝ սովորողին մի կողմից ինքնուրույն մտածելու հնարավորություն տալ, մյուս կողմից դաստիարակել այնպես, որ պատասխանատու լինի ասածի և արածի համար: Փաստորեն դեռևս 20-րդ դարի 70-ականների կեսերին Կարեն Սերոբիչը խոսում է **21-րդ դարի** սովորողի ամենակարևոր **հմտությունների և կրթության կարևոր վերջնարդյունքների** մասին:

Շեշտելով **դպրոցի** հսկայական դերը մեր հասարակության կյանքում, հեռատես դեկավարը արձանագրում է, որ վաղնջական ժամանակներից մեր ժողովուրդը հացից հետո ամենակարևորը համարել է դպրոցը: «**Դպրոցը սրբավայր է:** Ամբողջ աշխարհի ձևավորումն է: Սովետական մարդու բնավորության հատկանիշները ձևավորվում են առաջին հերթին դպրոցում:» Այսինքն՝ երկրի, հասարակության զարգացումն ու կայացումը ուղղակիորեն կախված է ժողովրդական կրթության համակարգի առաջադիմությունից, աճող սերնդի ուսուցման և դաստիարակության գործի բարելավումից» (Դեմիրճյան 1978): Կարեն Սերոբիչը սահմանում է **դպրոցի, դաստիարակության նպատակները, խնդիրները, գործառույթները**: Այսպես օրինակ, **դպրոցը պետք է.**

ա/ դաստիարակի ու պատրաստի **գիտակից ու բարեկիրթ մարդիկ**, որոնք ընդունակ են ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքի, ակտիվ գործունեության՝ հասարակական և պետական կյանքի տարբեր բնագավառներում, գիտության ու մշակույթի ոլորտում,

բ/ դաստիարակության գործի ամբողջ դրվածքի նկատմամբ կոմպլեքսային մոտեցում ցուցաբերի՝ ուժեղացնի ուսուցման գործընթացում և արտա-

ուումնական ժամանակամիջոցում կազմակերպվող միջոցառումների դաստիարակչական ներգործությունը,

գ/ կրթության բովանդակությունը շաղկապի տնտեսության պահանջ-մունքների հետ, հասնի ուսուցման մեթոդների մշտական արդիականացման: Սակայն դա չի նշանակում, ամեն ինչ մշտապես փոխենք և վերածենք, մերժենք ստուգվածը, որը բռնել է ժամանակի քննությունը՝ հանուն նորամուծության: Հարկավոր է արմատավորել իսկապես առաջավորը, առաջադիմակա-նը, որը հիմնված է գիտության և փորձի վրա,

դ/ բեռնաթափի անհարկի ծանրաբեռնված որոշ ծրագրեր և դասագրքեր: Հատուկ ուշադրություն դարձնի դրանց բովանդակությանն ու դաստիարակչական ներուժին: Որոշի ինֆորմացիայի ընտրության ուղիները, սիստեմավորի և աշակերտներին հաղորդի այն, ինչը առավել արդյունավետ է ներգործում նրանց զարգացման վրա,

ե/ սաների հոգում ցանի մարդկայնության, օրինավորության, զգայնու-թյան, բարության, իսկական հայրենասիրության սերմերը, հասարակության հանդեպ պարտքի վսեմ զգացումի, նրան ազնիվ ծառայելու պատրաստակա-նության, սոցիալական ակտիվության սերմերը,

զ/ ուժեղացնի պահանջկոտությունը գնահատականների անհիմն բարձրացման փաստերի նկատմամբ: Ատեստատըլիինի ոչ միայն գիտելիքնե-րի մակարդակի արտացոլման վկայական, այլ նաև մարդկայնության ու բա-րեկրթության, տվյալ հասակի համար անհրաժեշտ աստիճանի քաղաքական ու սոցիալական հասունության ատեստատ,

է/ արմատապես բարելավի մայրենի լեզվի դասավանդման գործը, պատշաճ բարձրության վրա դնի լեզուների և մաթեմատիկայի դասավան-դումը, շարունակի առարկաներից մեկի թեքումով դպրոցների կազմակեր-պումը, դպրոց «վերադարձնի» բոլոր գիտելիքների սկզբնաղբյուրը՝ գիրքը: Իրական խոր գիտելիքները ձեռք են բերվում քրտնաջան աշխատանքով, գրքերից, գրիչը ձեռքին: Չի կարելի անտարբեր մնալ, երբ աշակերտը, օրի-նակ, «Պատերազմ և խաղաղություն» ֆիլմը դիտելուց հետո այլևս չի կար-դում Լ. Տոլստոյի անմահ ստեղծագործությունը: Լավ է կրանավորմանը ծա-նոթ լինելը դեռ չի նշանակում, թե լավ գիտես նաև վեպը,

ը/ հոգ տանի, որպեսզի Հայաստանի պատանի քաղաքացիները կյանք մտնեն որպես բարձր կուլտուրայի տեր մարդիկ: Առանց արվեստի, գրակա-նության անհնար է դրան հասնել: Երիտասարդ սերնդի համար տակավին քիչ են ստեղծվում վառ, հուզիչ, գրավիչ ստեղծագործություններ: Մատաղ

սերնդին հարկավոր են նոր, հրապուրիչ ու խորիմաստ գրքեր, ներկայացումներ, կինոնկարներ: Դրան պարտավոր են օժանդակել թատրոնները, հեռուստատեսությունը, կինեմատոգրաֆը, հրատարակչությունները, մշակույթի պալատները, ակումբները, հայորդաց տները,

թ/ կարևորի դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրը: Բոլորը՝ թե՛ ծնողները, թե՛ աշակերտները, թե՛ լուսավորության մարմինները խորապես պետք է գիտակցեն ճիշտ կողմնորոշման անհրաժեշտությունը, այդ հարցին մոտենան պետական դիրքերից,

ժ/ իր աշակերտներին պաշտպանի մեր բարոյականության հակոտնյաների հոգեբանության ազդեցությունից, նրանց մեջ մշակի կենսական ակտիվ դիրքորոշում, որպեսզի նրանք ներծծված լինեն բացասական երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ոգով, դառնան մեր հասարակության բարոյական անաղարտության ակտիվ մարտիկներ (Դեմիրճյան 1978): Այս թեզերը այնքան օգտակար ու արդիական են, որ կարող են դրվել կրթության զարգացման ցանկացած ծրագրի հիմքում: Իդեալ, մեր երկրում կրթության զարգացման ծրագիր ունենալը օրենքի պահանջ է: Սա ասում եմ, որովհետև մի պահ եղավ, երբ ասվում էր, որ ի՞նչ պարտադիր է մշակել ռազմավարություն, մենք կփորձենք կառավարության ծրագրերով համակարգը կարգավորել: Վերջիվերջո որոշվեց ունենալ այդ ռազմավարությունը՝ թեև երկու անգամ օրենքը խախտվեց, և ստացվեց այնպես, որ փոխանակ 5 տարին մեկ ծրագիր ունենանք, 5 տարի այն մշակում ենք, հաջորդ 5-ին էլ իրականացնում: Իմ կարծիքով, սա հետևանք է այն բանի, որ կրթության բնագավառի քաղաքականության մշակման ոլորտում քիչ են այն մարդիկ, որոնք ունեն պետական մտածելակերպ, կարող են մտածել և գործել ռազմավարական մակարդակով, պրոֆեսիոնալներ են, գիտեն կրթության ոլորտի առանձնահատկությունները և ճանաչում են մեր երկրի յուրահատկությունները: Բացի այդ, կարծես թե նորաձև է դարձել այն, որ ներկայացվում են այս կամ այն երևույթի միայն փաստերը, մինչդեռ, քաղաքականություն, ռազմավարություն մշակելու համար պետք է դրան հետևի այդ երևույթի պատճառների վերլուծությունը: Այս ամենը շատ կարևոր է, այլապես կարող ենք ընկնել ծայրահեղությունների մեջ. ստեղծվի քիչ թե շատ ընդունելի փաստաթուղթ, սակայն այն իրատեսական և իրականացվելիք չլինի: Մի խոսքով ռազմավարական ծավալի աշխատանք անող կառավարչական ռեսուրս չունենք: Դրա պատճառն էլ այն է, որ բոլոր ոլորտներում նշանակումները, հիմնականում, արվում են ոչ թե փորձի, պրոֆեսիոնալիզմի, մասնագիտական կարողությունների՝

այլ ներքաղաքական շահախնդրության և կուսակցական տրամաբանության ներքո:

Կարեն Սերոբիչի համար որակյալ, արդյունավետ աշխատանքի ապահովման առաջին գրավականն այն էր, որ ցանկացած ոլորտի ղեկավար մեծ տեղ պետք է տա կոլեկտիվի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովման խնդրին: Անդրադառնալով յուրաքանչյուր դպրոցում բարենպաստ կրթական միջավայրի ստեղծման խնդրին, որը ժամանակակից մանկավարժության կարևոր հիմնախնդիրներից մեկն է, նա կարևորում է **համախոհներից** մանկավարժական կոլեկտիվ ձևավորելու խնդիրը, որովհետև դպրոցի առջև դրված բարդ խնդիրները կարող է լուծել միայն մանկավարժական այն կոլեկտիվը, որի բոլոր անդամները նույն դավանանքն ու արժեքներն ունեն, «իրենք կրթվածության, բարոյականության և դաստիարակության օրինակ են, այն կոլեկտիվը, ուր տիրում է ստեղծագործական աշխատանքի մթնոլորտ և սկզբունքայնությունն ու պահանջկոտությունը զուգորդում են միմյանց նկատմամբ բարոյականությամբ, փոխօգնությամբ, այն կոլեկտիվը, որի բոլոր անդամներն իրենց ուժերն ու եռանդը անմնացորդ նվիրում են սաների ձևավորմանը և ուսուցմանը: Առաջին անգամ, երբ իմացա, որ դպրոցում զգվրտոց կա, շատ զարմացա և տխրեցի: Մանկավարժները պետք է միահամուռ, համախմբված լինեն և բարեհամբույր միմյանց նկատմամբ: Երեխաները նկատում և ընկալում են մանկավարժական կոլեկտիվի վիճակը **և ըստ այդ էլ կարգավորում են իրենց վարքագիծը**: Մենք պետք է խորհենք, որ դառնանք միասնական կոլեկտիվներ, որ մի կետի խփենք, ստեղծագործ կոլեկտիվներ լինենք, ոչ թե աշխատող: Ուսուցիչը **աշխատող չէ**, ուսուցիչը մանկավարժական կոլեկտիվի անդամ է, նրանք բոլորը մեկ սուբյեկտի են լրացնում»: Եվ այստեղ Կ.Դեմիրճյանը հերթական հետաքրքիր համեմատությունն է անում՝ դարձյալ օրինակը արտադրությունից բերելով: «Արտադրության մեջ ձուլման և մամլման ցեխում կարող են տարբեր, իրար հետ կապ չունեցող մարդիկ աշխատել: Դուք չեք կարող իրար հետ կապ չունենալ, դուք բոլորդ մեկ սուբյեկտի եք լրացնում: Միացյալ ջանքերով պետք է աշխատեք» (Դեմիրճյան 1978):

ժամանակակից մանկավարժության ամենահրատապ հարցերից մեկը **ՏՀՏ-երի մանկավարժականացման հիմնխնդիրն է**: Այսօր Տեղեկատվական Հաղորդակցական տեխնոլոգիաները գործածվում են կյանքի բոլոր ոլորտներում՝ ազդելով մարդկանց ֆիզիկական, հոգեբանական, հոգևոր գործընթացների վրա: Օրեցօր ավելանում է այն երեխաների թիվը, որոնք

տարված են համակարգչով, համակարգչային խաղերով, որի հետևանքով նրանցից շատերի մոտ առաջացել է «կլիպային մտածողություն և էկրանային կախվածություն»: Վերջինիս պատճառով երեխաների մի մասը վարժ կարողալ չի կարողանում, վանկերով է կարդում: Այսօր դպրոցից արդարացիորեն պահանջվում է ուսուցման գործընթացում ակտիվորեն օգտագործել մեդիատեխնոլոգիաները՝ երեխաներին սովորել սովորեցնելու, անհրաժեշտ գիտելիքը, տեղեկատվությունը ինքնուրույն գտնել կարողանալու համար: Մեր հեռատես առաջնորդը դեռևս անցյալ դարում զգուշացնում էր, որ «ժամանակակից մարդը գտնվում է մեր դարաշրջանի յուրատեսակ տեղեկատվական պայթյունի ազդեցության տակ: Այն մարդը կկարողանա այդ պայթյունից անվնաս ազատվել, ով ունի կայուն գիտելիքներ, բնության ու հասարակության մասին գիտական պատկերացումների տեսական ամուր հիմք, հեշտ է ընտելանում և հեշտ է կողմնորոշվում ինֆորմացիայի այդ հոսանքի մեջ, կարողանում է ճիշտ գնահատել և վերլուծել ստացածը, դեն նետել ոչ հարկավորը, վերցնել այն, ինչ կարևոր է և անհրաժեշտ աշխատանքի, սեփական աճի, մասնագիտական և ընդհանուր զարգացման համար: Դրա համար հատկապես անհրաժեշտ է դպրոցում դնել գիտելիքների՝ ամբողջ կյանքի այդ հուսալի կողմնացույցի ամուր հիմքը» (Դեմիրճյան 1978):

Փաստորեն 45 տարի առաջ Կարեն Սերոբիչը մանկավարժների ուշադրությունը հրավիրել է այն հարցի վրա, որ տեղեկատվությունը անհրաժեշտ է օգտագործել աշխատանքի համար, սեփական աճի, մասնագիտական և ընդհանուր զարգացման համար և որ տեղեկատվական հասարակությունում ապահովված կլինի այն երեխաների անվտանգությունը, որոնք անհրաժեշտ գիտելիքներ կունենան տեղեկատվությունից ճիշտ օգտվելու, դրա տողատակը զգալու, հասկանալու, դրա հավաստիությունը ստուգելու /fact checking/ վերաբերյալ: 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ այսօր դրանք շատ կարևոր հմտություններ են ինչպես մանկավարժի, այնպես էլ սովորողի համար:

Մեր բազմաշնորհի ղեկավարը հարստացրել է նաև մանկավարժական տերմինաբանությունը: «**Դժվարակիրթ դեռահասներ**» նոր մանկավարժական տերմինը, չի նվաստացնում երեխային, ծնողին կամ մանկավարժին, ինչպես այսօր օգտագործվող հասկացությունները: Օր. ծնողական կամ մանկավարժական հսկողությունից դուրս մնացած երեխա կամ իրավախախտ անչափահաս և այլն: **Դժվարակիրթ դեռահասի** դեպքում կարծես ծնողն ու

ուսուցիչը երկուստեք են «մեղավոր», ուստի երկուստեք էլ պետք է պատասխան տան և միասին հաղթահարեն բացթողումը:

Որտեղ էլ աշխատել է Կարեն Սերոբիչը մեծ ուշադրություն և աննկատ հոգատարություն է ցուցաբերել բոլոր կադրերի նկատմամբ: Կրթության պարագայում նա համոզված էր, որ նրանք որոշում են ամեն ինչ, կադրերը հարցերի հարցն են, նրանց պատրաստությունն ու դաստիարակությունը պետական գործ: Որպեսզի դաստիարակը կարողանա դաստիարակել, ինքը պետք է դաստիարակված լինի: Ինքը պետք է բարեկիրթ լինի: Կադրերի պատրաստման գործում նույնպես նա վճռական դեր է հատկացնում դպրոցին, որովհետև մեր հասարակական կյանքի, գիտության ու կուլտուրայի, մասնագիտական բարձրագույն կրթությամբ որակյալ կադրերի նախնական պատրաստման բազան միշտ եղել ու մնում է միջնակարգ դպրոցը, «մեր հասարակության հետագա առաջընթացը մեծապես կախված է համընդհանուր միջնակարգ կրթության իրականացումից և այն բանից, թե ինչպիսի շրջանավարտներ կտան մեր դպրոցները, ինչպիսին կլինի նրանց գիտելիքների խորքն ու մակարդակը, նրանց կենսադիրքորոշումը, բարոյաքաղաքացիական կերպարը: Մենք պետք է հիշենք այդ գործում մանկավարժական գիտության հսկայական դերի մասին: Բայց, ցավոք, հանրապետությունում **մանկավարժական գիտությունը** դեռ չի դարձել աճող սերնդի ուսուցման ու դաստիարակության մակարդակի բարձրացման այդպիսի արդյունավետ միջոց:» Այդ նպատակով խնդիր է դնում Լուսավորության և բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունների առջև «նոր խնդիրների մակարդակին բարձրացնել մանկավարժական գիտությունը հանրապետությունում, վերացնել մանրաթեմայնությունը, ոչ հրատապ թեմաների վրա միջոցների փոշիացումը, հիմնական գիտամանկավարժական ուժերի ուշադրությունը կենտրոնացնել մանկավարժական տեսության ու պրակտիկայի համար առավել կարևոր պրոբլեմների կոմպլեքսային հետազոտության, աճող սերնդի ուսուցման ու դաստիարակության հարցերի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ մշակելու վրա» (Դեմիրճյան 1978): Անդրադառնալով որոշ գյուղական դպրոցներում ուսուցչական կադրերի պակասին և հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները՝ հանձնարարում է «ավելացնել լայն պրոֆիլի ուսուցիչների և այն ուսուցիչների պատրաստումը, որոնց կարիքը զգացվում է մեր հանրապետությունում»: Ահա **մանկավարժական կրթության զարգացման համառոտագույն և այժմեական ծրագիրը**: Նման ծրագիրը

բացառում է մեզանում այսօր մոդայիկ դարձած, 30 կրեդիտով մանկավարժ պատրաստելու մոլուցքով տարված անհաջող փորձերը և ամենակարևորը՝ խոչընդոտում է երեխայի հետ չչփված, կասկածելի գաղափարներով, կողմնորոշումներով ու արտաքինով, կենցաղային մակարդակով հայերենին տիրապետող ցանկացած մասնագետի մուտքը դպրոց:

Մեծ հայրենասերն ու մարդասերը: Կարեն Դեմիրճյանը Հայաստանի նորագույն պատմության մեջ բացառիկ տեղ և նշանակություն ունի: Վառ և հզոր անհատականություն, պետական գործիչ, ում հաջողվեց մեր երկրի համար դժվար իրավիճակում համախմբել քաղաքական ուժերին: Անհրաժեշտ էր համառ ու լարված գործունեություն, որը պահանջում էր մեծ նպատակին ստորադասել ամեն ինչ, նաև անձնական կյանքը: Այդպես էր աշխատում Կարեն Դեմիրճյան առաջնորդն ու նույնը պահանջում էր իր շրջապատից: Նա բացառիկ ոգեշնչող, յուրաքանչյուրիս ստեղծագործականության, նախաձեռնողականության մղող ղեկավար էր: Համարձակորեն կարող եմ ասել, որ Կարեն Դեմիրճյան ղեկավարի համար արժեքներից գլխավորը **Հայաստանի շահն էր: Նրա դավանանքը** ամփոփված է հետևյալում: «Իմ կարծիքով, անկախությունը ոչ միայն նվաճվում է պայքարում կամ ընծայվում, այլև ստեղծվում է, դաստիարակվում է, գենետիկորեն ձևավորվում է տարիներով, դարերով: Մեր ժողովուրդը մանկան պես միամիտ է ու դյուրահավատ, նա ծանր պատմություն է ունեցել, նրան շատ են խաբել: Ես երբեք չեմ խաբի ժողովրդին: Եվ եթե իմ գործունեության ընթացքում ինձ հաջողվի փոքր ինչ բարձրացնել ազգի մակարդակը, իմ պատմական առաքելությունը կհամարեմ կատարած: Ես միշտ իշխանությունը դիտել եմ որպես միջոց, այլ ոչ թե նպատակ: Ժողովրդի ողբերգությունն է, երբ իշխանությանը ձգտում և հասնում են նրանք, ում համար իշխանությունը նպատակ է, ոչ թե միջոց: **Հանուն հայրենիքի բարգավաճման ես կարող եմ համագործակցել ամբողջ պալիտրայի հետ: Մեր ժողովրդի համախմբվածությունն ու միասնությունն է կարևորը**» (Դեմիրճյան 2000:19-21): Որքան տեղին ու արդիական են հնչում այս բառերը, որքան հայրենասիրություն, ազգասիրություն ու ժողովրդասիրություն է ամփոփված այս պատգամում: Իրապես սերունդների համար ընդօրինակման արժանի, ազգային հպարտություն առաջացնող հայրենասերի կերպարն է հառնում:

Կ.Դեմիրճյանը հպարտ էր, որ Հայ էր: Դա արտահայտվում էր նրա բոլոր ելույթներում: Մասնավորապես երիտասարդության, ուսանողության հետ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ: Նա միշտ կրկնում էր. «Հայաստանի

ապագան տեխնիկապես, տեխնոլոգիապես և գիտականորեն զարգացած լինելու մեջ է, որպեսզի հարևանները կախվածության մեջ լինեն մեզանից այնպես, ինչպես մենք՝ Եվրոպայից: Ի վերջո մարդիկ հաշվի են նստում ցանկացած ձևով արտահայտված ուժի հետ, այլ ոչ միայն ռազմական կամ ֆիզիկական: **Ուսումը այն դեպքում է օգտակար, երբ այն ունենում է դրական, գործնական արդյունք:** Մենք փոքր երկիր ենք և ոչ մեկին չենք կարող զարմացնել մեր արտադրանքի ծավալներով և քանակով: Մենք կարող ենք և պարտավոր ենք տեղ գրավել աշխարհում միայն փոքրածավալ, գիտական առաջատար միտք պարունակող, բարձր որակ, միջազգային ստանդարտներին համապատասխանող և դրանք գերազանցող արտադրանքով» (Դեմիրճյան 2000:17-18):

«Մենք բոլորս, հատկապես ուսուցիչները, պետք է հոգ տանենք, որպեսզի Հայաստանի պատանի քաղաքացիները կյանք մտնեն որպես բարձր կուլտուրայի տեր մարդիկ»: «Ինքնուրույնության և պատասխանատվության համատեղ դաստիարակությունը մանկավարժության գերխնդիրն է» (Դեմիրճյան 2000:26): «Ղեկավարի արժանիքը ոչ այնքան այն է, թե ինչ նպատակներ է նա դնում իր առջև, որքան այն, թե ինչքանով է ռեալ այդ նպատակների իրականացման աստիճանը: Վեհ, ազնիվ, բայց անիրականալի նպատակը ավելի վտանգավոր է, քան որևէ այլ բան: Հնարավորություններով չամրապնդված քաղաքական նպատակների առաջընթացումը բախտախնդրություն է» (Դեմիրճյան 2000:17): Ավելի լավ, քան տիկին Ռիմա Դեմիրճյանն (2012:565) է ասել իր հեղինակած «Հիշատակ» գրքում հնարավոր չէ ասել: «Ինձ համար Կարեն Դեմիրճյանը ...նաև ուսուցիչ էր, դաստիարակ, Մարդու օրինակ»:

Վերոհիշյալ մտքերն արտահայտվել են անցյալ դարի 70-ական թվականներին: Անցել է համարյա կես դար: Սակայն այսօր էլ դրանք մեր ժողովրդի համար կարևոր **ռազմավարական** նշանակություն ունեցող հարցեր են և խիստ ներդաշնակ են 2050 թվականի կրթության առջև դրված միջազգային չափանիշներին:

1999 թ. հոկտեմբերի 27-ի հետևանքներն անդառնալի են: Իմ սերնդից շատերն այդ օրերին ասում էին, որ կորցրեցին ապագայի նկատմամբ հավատը և մեկնեցին երկրից: Փաստորեն մեր թշնամին ավելի շուտ հասկացավ մեր ուժի աղբյուրը և քանդեց մեր ժողովրդի միասնության հիմքերը: **Մեր սերնդի համար, համոզված եմ, նաև գալիք սերունդների համար Կարեն Սերոբիչը եղել է և կմնա Հայաստանի նորագույն պատմության ամե-**

նահգոր քաղաքական գործիչն ու Անհատականությունը: Մարդ և Առաջնորդ, ով նվաճել է իր ժողովրդի սերն ու վստահությունը, իրապես Ազգային Հերոս, ում ողջ կյանքն ու կենսագրությունը ընդօրինակման արժանի է, և յուրաքանչյուր ապագա սերնդի դաստիարակության հզոր և ազդեցիկ գործոն է:

Եզրակացություն: ՀՀ Ազգային հերոս, տաղանդավոր քաղաքական գործիչ Կարեն Սերոբի Դեմիրճյանի մանկավարժական հայացքները հարստացնում են մանկավարժության տեսությունն ու պատմությունը, օգտակար են մանկավարժության ոլորտում ընդգրկված բոլոր մասնագետների համար: Նրա կյանքն ու կենսագրությունը՝ **Մարդը և Հայը** դաստիարակելու համար լավագույն օրինակ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դեմիրճյան Կ. Ս. «Աճեցնել կոմունիզմի համար մարտնչողների սերունդ»։ Սովետական Հայաստան 1978թ.հունիսի 7,Երևան
2. Դեմիրճյան Ռ.Ա. «Հիշատակ»Էդիթ Պրինտ,Երևան,2012
3. «Կարեն Դեմիրճյան, խոհեր և մտորումներ» Հայագիտակ,Երևան,2000
4. Հախումյան Ս.Տ. «Դաստիարակել կոմունիստական հասարակարգի արժանի քաղաքացիներ»։ Սովետական Հայաստան, 1978 թ.հունիս 6, Երևան

REFERENCES

1. Demirchyan K.S., “Achechel komunizmi hamar martnchoghneri serund”. Sovetakan Hayastan 1978, hunisi 7, Yerevan. (In Armenian)
2. Demirchyan R.A. “Hishatak” Edit Print, Yerevan 2012. (In Armenian)
3. “Karen Demirchyan, khoher ev mtorumner” Hayagitak, Yerevan 2000. (In Armenian)
4. Hakhumyan S.T., “Dastiarakel komunistakan hasarakargi arjani qaghaqaciner”. Sovetakan Hayastan, 1978, hunis 6, Yerevan. (In Armenian)

АИДА ТОПУЗЯН - НАЦИОНАЛЬНЫЙ ГЕРОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАРЕН ДЕМИРЧЯН ОБ ОБРАЗОВАНИИ, ШКОЛЕ И УЧИТЕЛЕ

***Ключевые слова:** народное образование, учитель, школьное воспитание, педагогическая наука*

В 2022 году исполняется 90 лет со дня рождения Национального Героя Республики Армения Карена Демирчяна, человека, руководившего нашей республикой в 1974-1988 годах, для которого школа, учитель, образование и педагогическая наука всегда были приоритетными направлениями на протяжении всей его деятельности. В статье кратко представлены потребности и проблемы, с которыми столкнулось народное образование Армении в данный период, подходы и педагогические взгляды К. Демирчяна в решении этих проблем, повышение статуса школы и учителя, развитие и модернизация педагогической науки и процессы подготовки педагогических кадров.

AIDA TOPUZYAN - NATIONAL HERO OF THE REPUBLIC OF ARMENIA KAREN DEMIRCHYAN ABOUT EDUCATION, SCHOOL AND TEACHER

***Keywords:** folk education, teacher, school education, pedagogical science.*

2022 marks the 90th anniversary of the birth of RA National Hero Karen Demirchyan. A person who led our republic in 1974-1988 and for whom the school, teacher, education and pedagogical science were always priority areas throughout his entire career. The article briefly presents the demands and problems faced by the Folkeducation of that time, the approaches and pedagogical views of K. Demirchyan in solving these problems, increasing the status of the school and the teacher, developing and modernizing the pedagogical science and the processes of training pedagogical staff.

ՀՏԴ 37.037:617.75

DOI: 10.51307/182931072015233260-22.61-96

ЛЕЧЕБНАЯ ФИЗКУЛЬТУРА ПРИ ЗАБОЛЕВАНИЯХ ОРГАНОВ ЗРЕНИЯ

АННА ДАРБИНЯН
АЛИНА ШАЛДЖЯН
ЭВЕЛИНА АДАМЯН

Аннотация

Очевидно, что современный мир переживает техническую эволюцию. Телефоны и компьютеры стали неотъемлемой частью человека, что, в первую очередь, негативно сказывается на органах зрения. В данной работе представлены проблемы студентов института им. В. Брюсова, связанные со зрением. Было проведено исследование и выяснилось, что 20% студентов специальной медицинской группы имеют заболевания органов зрения.

Нами предложены упражнения, которые их предотвращают и даже улучшают состояние.

Ключевые слова: нарушения зрительной функции, профилактика, лечение, комплексные упражнения

Введение. В современном мире стремительными темпами увеличивается использование компьютерных технологий в повседневной жизни. Компьютеры и интернет стали незаменимыми помощниками в учебе и работе и даже стали частью досуга. По данным ВОЗ, проблемы со зрением имеют около 300 миллионов людей в мире. Из них 43% страдают нарушениями рефракции – близорукостью (миопией), дальнозоркостью (гиперметропией) и астигматизмом. Одна из реальных причин нарушения зрения – генетическая предрасположенность к данным заболеваниям, отягощенная постоянным использованием экранов телевизоров, мониторов компьютеров, дисплеев смартфонов и т.д (Аветисов 1975:153-167).

Безусловно, причинами снижения или потери зрения могут быть травмы, неправильный образ жизни, чрезмерная зрительная нагрузка, и пр.

В контексте сказанного, профилактика и лечение заболеваний обретают исключительное значение. В настоящей статье предложены упражнения, способствующие предотвращению наиболее часто встречаемых заболеваний зрительных органов и оказывающие лечебное воздействие на них (Аветисов 1986:142).

Зрение является не только одним из основных органов чувств, но и органом, с помощью которого мы получаем визуальную информацию об окружающем мире. Зрительные проблемы приводят к ухудшению качества восприятия такой информации.

В настоящее время в нашей жизни существенную роль играют цифровые технологии: телевизор, компьютер, телефон и т.д. Без этих технологий уже невозможно представить нашу повседневную жизнь (Амриддинова 1986:23).

Однако повсеместное распространение технологий во все аспекты жизни оказывает существенное влияние на здоровье, в особенности на зрение.

Методы исследования: анализ литературы, анализ результатов общего медицинского осмотра.

Результаты исследования. За 5 лет исследований в Университете им. В. Брюсова г. Ереване совместно со студентами специальной группы физического воспитания ВУЗа мы пришли к выводу, что около 20% студентов страдают проблемами со зрением. Обследования были проведены среди 200 студентов.




Диаграмма 1: Проценты студентов имеющихся заболевания органов зрения по годам

Средства профилактики и лечения заболеваний органов зрения разнообразны, одним из которых является лечебная физкультура. По полученным от исследования результатам мы предлагаем комплекс упражнений, которые были комплектованы нами направленных на улучшение зрения (Аветисов 1969:4).

Упражнения были выбраны и укомплектованы основываясь на следующих принципах.

1. Наглядность
2. Самостоятельная выполнения
3. Работа не требующая специальных средств

Близорукость. Близорукость (миопия) – дефект глаза, при котором человек плохо видит предметы, находящиеся вдали. Он чаще развивается в школьном возрасте главным образом из-за длительного времени визуальной работы (чтение, компьютер), особенно при недостаточном освещении. Близорукости способствуют также наследственные факторы. Близорукость диагностируется на специальном устройстве помощью рефрактометра и специального метода (скиаскопии) (Аветисов 1986:142).

Наиболее распространённая причина — увеличенное в длину глазное яблоко, вследствие чего сетчатка располагается за фокальной плоскостью. Более редкий вариант — когда преломляющая система глаза (роговица и хрусталик) фокусирует лучи сильнее, чем нужно и, как следствие, они также сходятся не на сетчатке, а перед ней. В любом из вариантов при рассматривании удалённых предметов на сетчатке возникает нечёткое, размытое изображение.

Углубление близорукости становится возможным замедлить или остановить с помощью специальных упражнений и диеты (Аветисов, Розенблюм 1989:3-6).

Полезными для зрения считаются:

- витамин А в большом количестве содержится в животной печени
- витамин Вв в большом количестве содержится в бобовых и зерновых
- витамин Св в большом количестве содержится в цитрусовых, в черной смородине
- аминокислоты, Омега 3-предотвращают заболевания глаз, такие как Это-катаракта, появление глаукомы.

Как мы уже отмечали, близорукость может замедлиться или остановиться при выполнении специальных упражнений.

В основе тренировки лежат тренировки глазных мышц, удерживающих зрительный нерв. Тренировка по укреплению придаёт им эластичность, благодаря чему мышцы лучше выполняют свою функцию (Акимова, Зубов 1973:94 – 96.).

Занятия следующие:

1. упражнения для кровообращения и активации внутренней жидкости,
2. упражнения для укрепления мышц,
3. упражнения для улучшения адаптации(аккомодация).

Среди множества упражнений выбраны и предложены следующие для применения в специальной лечебной группе (Патрушева 2018).

1. Моргание - необходимо в течение минуты быстро моргать глазами.
2. Держа голову прямо переводить взгляд слева направо и обратно.

Совершать 4-6 раз.

3. Держа голову прямо переводить взглядвверх, вниз, вправо, влево, задерживая в каждой точке взгляд на 5 секунд.

Совершать 4-6 раз.

4. Держа голову прямо рисовать глазамицифру 8.

Совершать 3-4 раза.

5. Закрывать глаза, удерживайте 5-8 сек. затем широко открыть глаза и держать

5-8 сек. совершать 4-6 раз.

6. Вырисовывать взглядом геометрические фигуры-треугольник, четырехугольник, круг.

Выполнять без движения головы, каждую фигуру 3-4 раза (Адамюк 1986: 205).

7. Закрывать глаза, поднимать глаза вверх, затем вниз. Делать 6-8 раз.

8. Взгляд сосредоточен на предмете на расстоянии 5-8 метров. Сфокусировать взгляд на этом предмете в течение 30 секунд. Затем переместить взгляд на предмет на расстоянии 15-20 см. (это может быть собственный палец) и смотреть также в течение 30 секунд.

Выполнить 3-5 раз.

9. Согретье руки, потерев их друг об друга, а затем закройте глаза ладонями на 10 секунд.

Это упражнение можно выполнять между другими, потому что это упражнение успокаивающего характера (Аветисов, Савицкая, Шмулей и др. 1968:43-45).

Дальнозоркость. Дальнозоркость (гиперметропия) - оптический дефект глаза, при котором параллельные лучи по предмету фокусируются не на сетчатке, а за ней, и человек не может четко видеть предметы, находящиеся вблизи. Различают слабый, средний и высокий уровень дальнозоркости.

Причиной дальнозоркости может быть близость глазного яблока или глаз рефракционная сила.

Причина возрастной (старческой) дальнозоркости (пресбиопии) — уменьшение способности хрусталика изменять кривизну. Этот процесс начинается в возрасте около 25 лет, но лишь к 40—50 годам может приводить к снижению остроты зрения при чтении на обычном расстоянии от глаз (25—30 см). Физические упражнения для расслабления глаз от напряженной длительной работы и могут значительно замедлить появление дальнозоркости. Предлагаемые упражнения следующие:

1. Закрывать глаза, веки должны быть спокойны. Закрывать глаза ладонями так, чтобы не проникал свет, в то же время не сжимать веки. Держать 1-2 минуты, после чего глаза, не открывая глаза, посмотрите вверх, вниз, вправо, влево по 2 секунду в каждую сторону. Повторять 6-8 раз.
2. Представьте, что у вас есть карандаш на конце носа, напишите им свое имя, не отрывая карандаш от воображаемого листа бумаги.
3. Держите ручку на расстоянии 30 см от лица, сконцентрируйте взгляд на ручке в течение 20 секунд, затем переместите взгляд на другие предметы в комнате на 10 сек. Повторять 6-8 раз.
4. Держать ручку впереди, рисовать круг в воздухе, провожая ручку взглядом. Выполнять в каждую сторону 3-4 раза.
5. Читать книгу, текст которой будет на расстоянии 25 см. Читать не более 15 минут.
6. Поднимите руки вверх на уровень глаз. Раскрыть пальцы и посмотреть на окружающие предметы сквозь пальцы. Постепенно наклоните голову вправо, потом налево. Взгляд не нужно фиксировать на пальцах. Нужно смотреть на предметы, которые видны сквозь пальцы. Выполнить около 30 раз.

7. Для выполнения этого упражнения необходимы часы-настенные и ручные.

Закрывать один глаз и сконцентрироваться на часах на стене на 1 минуту. Затем переместить взгляд на наручные часы, тоже посмотрев на одну минуту. Выполнить упражнение, глядя на все цифры. Выполнить то же самое другим взглядом.

Астигматизм. Астигматизм – дефект зрения, связанный с нарушением сферической формы роговицы, которая в этом случае имеет форму не среза шара, а среза тора и таким образом может быть полностью исправлен лазером.

В результате наличия астигматизма человек теряет способность к чёткому видению. Астигматизм может быть наследственного характера или приобретенного, который появляется в течение многих лет.

Симптомы астигматизма: нечеткое, туманное зрение, головные боли, чувство усталости.

Астигматизм может сочетаться и с близорукостью и дальнозоркостью. Для лечения астигматизма применяются специальные очки, линзы лучшим решением является операция, но с помощью физических упражнений можно решить несколько проблем.

- снижается напряжение глаз от длительной визуальной работы,
- нормализуется кровообращение,
- укрепляются мышцы глаз, улучшая аккомодацию и зрение.

В случае решения этих проблем будет предотвращено углубление астигматизма. Предлагаемые упражнения те же, что при близорукости и дальнозоркости.

Являясь одним из сложнейших человеческих органов, зрительная система несет колоссальную нагрузку на протяжении всей жизни и зачастую существенно страдает. Разработанный нами комплекс упражнений, в случае регулярного выполнения, поможет поддержать тонус глазных мышц, предотвратить ухудшение зрения, а также исправить некоторые дефекты зрительной функции. Однако, для достижения наилучшего результата, необходим комплексный подход, сочетающий упражнения и альтернативные способы поддержания и коррекции зрения.

Заключение. В результате исследования выяснилось, что в специальных лечебных группах количество студентов с проблемами органов зрения в

промежутке 5 лет в среднем составляет 23,54%. Мы считаем это серьезным показателем и в качестве метода лечения предлагаем специальные комплексы упражнений. Предлагаем упражнения для глаз, взятые из литературных источников. В процессе их выполнения развиваются глазные мышцы, улучшается кровообращение, что, в свою очередь, способствует улучшению зрения.

ЛИТЕРАТУРА

1. Аветисов Э.С., Близорукость. М.: Медицина, 1986.-240 с.
2. Аветисов Э.С., Охрана зрения детей. М.: Медицина, 1975.-240 с. 153-167.
3. Аветисов Э.С., Упражнения «метка на стекле»// Метод ре-ком и. – М., 1969 -4 с.
4. Аветисов Э.С., Ливадо Е.И., Курпан Ю.И. Физкультура при близорукости, М.: Советский спорт, 1993, 80 с.
5. Аветисов Э.С., Розенблюм Ю.З., Тарутта Е.П. Профилактика близорукости // Вестник офтальм. 1989 – №6. – С. 3 – 6.
6. Аветисов Э.С., Савицкая Н.Ф., Шмулей В.П. и др. О гемодинамике глаз при миопии // Вест, офтал. 1968. – №6. – С. 43-45.
7. Адамюк Е., К вопросу о миопии в школах // Вест, офтал. 1986. Т.III–269 с.
8. Акимова А.А., Зубов В.А. Двигательная активность и морфофункциональные особенности детей с патологией органа зрения// В кн.: Физическая культура в оздоровительных группах. – Минск, 1973. С. 94 – 96.
9. Амриджинова Ш.А., Клинические особенности начальной близорукости и их измерения под влиянием лечебных воздействий: Автореф. дис., кнн М., 1986 – 23 с.
10. Патрушева Л.В. Лечебная физическая культура при заболеваниях органов зрения – Благовещенск, 2018.

REFERENCES

1. Avetisov Je.S., Blizorukost'. M.:Medicina, 1986.-240 s.
2. Avetisov Je.S., Ohrana zrenija detej. M.:Medicina, 1975.-240 s. 153-167.
3. Avetisov Je.S., Uprazhnenija «metka na stekle»// Metod re-kom i.– M.,1969-4 s.
4. Avetisov Je.S., Livado E.I., Kurpan Ju.I. Fizkul'tura pri blizorukosti, M.: Sovetskij sport, 1993, 80 s.

5. Avetisov Je.S., Rozenbljum Ju.Z., Tarutta E.P. Profilaktika blizorukosti // Vestnik oftal'm. 1989 – N6. – C. 3 – 6.
6. Avetisov Je.S., Savickaja N.F., Shmulej V.P. i dr. O gemodinamike glaz pri miopii // Vest, oftal. 1968. – N6. – S. 43-45.
7. Adamjuk E., K voprosu o miopii v shkolah // Vest, oftal. 1986. T. III – 269 c.
8. Akimova A.A., Zubov V.A. Dvigatel'naja aktivnost' i morfofunkcional'nye osobennosti detej s patologiej organa zrenija// V kn.: Fizicheskaja kul'tura v ozdorovitel'nyh gruppah. – Minsk, 1973. S. 94 – 96.
9. Amriddinova Sh.A., Klinicheskie osobennosti nachal'noj blizorukosti i ih izmerenija pod vlijaniem lecebnyh vozdeystvij: Avtoref. dis., kmn M., 1986–23 s.
10. Patrusheva L.V. Lechebnaja fizicheskaja kul'tura pri zabolevanijah organov zrenija – Blagoveshensk, 2018.

ANNA DARBINYAN, ALINA SHALJAN, EVELINA ADAMYAN - PHYSICAL THERAPY FOR DISEASES OF THE VISUAL ORGANS

Keywords: *visual disfunction, prevention, treatment, complex exercises*

It is obvious that the modern world is undergoing technical development and phones and computers have become an integral part of people, which first of all negatively affects the visual organs. In this work, the problems of the visual

organs of the students of Brusov State University are presented and exercises are suggested that prevent and even improve them.

**ԱՆՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ, ԱԼԻՆԱ ՇԱԼՁՅԱՆ, ԷՎԵԼԻՆԱ ԱԴԱՄՅԱՆ – ԲՈՒ
ԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒ
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

Հիմնաբառեր՝ տեսողական ֆունկցիայի խանգարում, կանխարգելում, բուժում, համալիր վարժություններ

Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհը տեխնիկական զարգացում է ապրում և հեռախոսները, համակարգիչները դարձել են մարդկանց անբաժանելի մաս, որն առաջին հերթին բացասաբար է անդրադառնում տեսողական օրգանների վրա: Սույն աշխատանքում ներկայացված է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանի ուսանողների տեսողական օրգանների խնդիրները և առաջարկվող վարժություններ, որոնք կանխում և նույնիսկ լավացնում են դրանք:

ՀՏԴ 37.01:811.111

DOI: 10.51307/182931072015233260-22.61-105

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ АУДИТИВНЫХ УМЕНИЙ В ПРОСВЕЩЕННОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

ИГОРЬ КАРАПЕТЯН
АГНЕСА ШАХНАЗАРЯН

Аннотация

В статье рассматриваются особенности развития навыков аудирования у студентов факультета иностранных языков с позиций разных методологических парадигм (советско-российской и западной, особенно англо-американской). Подходы и модели, сформированные в рамках деятельностной и когнитивно-коммуникативной теорий, подвергаются историко-сопоставительному анализу. С позиций этих же теорий выделяются основные трудности аудирования с учетом языкового уровня учащихся, социокультурной компетентности, оперативной памяти, проявлений фонетической интерференции, познавательной мотивации учащихся, в целом, педагогических условий аудирования.

Ключевые слова: аудирование, фоновые знания, фонетическая интерференция, мотивация, социокультурная компетенция, прагматическая компетенция, дискурсивная компетенция, реактивный, рецептивный.

Введение. Аудирование, наряду с говорением, обеспечивает возможность общения на иностранном языке. Недооценка познавательной, воспитательной, образовательной роли аудирования отрицательно влияет на языковой подготовке студентов. Именно не достаточная сформированность аудитивных умений и навыков студентов является причиной нарушения иноязычного общения. Это объясняется еще и тем, что у армянских студентов недостаточно хорошо развита социокультурная компетенция.

Проблема исследования заключается в том, что очень часто использование новых, более эффективных методик обучения аудированию в конечном итоге не дает желаемых результатов. Многие студенты с трудом вов-

лекаются в процесс аудирования. Очень часто студенты не могут определить цель и задачи аудирования. Распространенной ошибкой среди студентов является то, что гарантией успешного аудирования они считают в основном наличие фонетических знаний. Более сообразительные студенты не забывают о роли знаний грамматики и лексики. Однако очень часто отодвигаются на задний план знания о прагмалингвистических особенностях аудирования.

Многие авторы (Гез, Елухина и др.) отмечают, что данное умение остается недостаточно развитым, так как многие преподаватели не в должной мере представляют психологические сложности аудирования (Королёва, Куликова 2011:3). И. А. Зимняя, Дж. Андерсон рассматривает психологические особенности аудирования. Предметом исследования О'Мали. Дж. Шамо стали стратегии обучения аудированию. В. Риверс, М. Темперли, Л. Жандегриф создали эффективные модели обучения аудированию.

Цель статьи заключается в анализе и выделении тех аспектов аудирования, учет которых позволит повысить эффективность аудирования в профессиональном курсе английского языка.

Задачи исследования состоит а) в выявлении основных трудностей аудирования, с учетом особенностей не только фонетической, но и лексической, грамматической, а также межкультурной интерференции, б) определении когнитивных, компенсаторных стратегий взаимосвязанного обучения чтению, письму и говорению.

ա) Դիտարկենք Կանադայում կրթության բովանդակության հիմքում ընկած կարողունակությունները, առանցքային գաղափարները: Կանադան համարվում է համաշխարհային առաջատարներից մեկը գրագիտություն գարգացման որակով (<https://gpseducation.oecd.org/CountryProfile?primary-Country=CAN&treshold=10&topic=PI>): Առաջատար է կարդալու և մաթեմատիկական գրագիտության, գիտական գրագիտության, S<S գրագիտության ոլորտներում և ունիվերսալ է կարողունակություններով (քննադատական մտածողություն, ստեղծագործականություն և այլն): Ուսումնական ծրագրերը թարմացնելու համար ընտրվել են այնպիսի հիմնական կարողունակություններ, որոնք ապահովում են էական ազդեցություն անհատի կրթական հաջողությունների վրա, նրա հարաբերությունները այլ մարդկանց հետ, զբաղվածության հնարավորությունները, առողջությունը և ընդհանուր բարեկեցությունը:

Կանադայի կրթական կարողունակությունների բաղադրիչներն են .

- քնավորության կրթություն,
- քաղաքացիական կրթություն,
- համագործակցություն,
- ստեղծագործականություն,
- հաղորդակցականություն,
- քննադատական մտածողություն և խնդիրների լուծում:

(<https://www.canada.ca/en/treasury-board-secretariat/services/professional-development/key-leadership-competency-profile.html>)

բ) Դիտարկենք Ֆինլանդիայում կրթության բովանդակության հիմքում ընկած կարողունակությունները, առանցքային գաղափարները:

«Ֆորմալ կրթության» չափանիշով առաջատար դիրքում է Ֆինլանդիան:

(<https://www.statista.com/statistics/986919/pisa-student-performance-by-field-and-score-finland/>)

Ֆինլանդիայի կրթական համակարգը լավագույններից է աշխարհում՝ տնտեսության կարիքների համար մարդկանց հմտությունները համապատասխանելու ձևաչափով (<http://www.ims.mii.lt/ims/files/EducationmodelFinland-Marianne.pdf>): Չնայած իր փոքր չափերին՝ Ֆինլանդիայի տնտեսությունը ամենահաջողակներից մեկն է աշխարհում: Ֆինլանդիան ձգտում է, որ

կրթական նպատակները բավարարեն տնտեսության կարիքները: Բարեփոխումների ծրագիրը կառուցվել է շուրջ 20 տարի: Բացահայտվել են 7 ընդհանուր /խաչաձև կարողունակություններ/, որոնք ներառվել են ուսումնական պլանում և ձևավորվում են բոլոր առարկաներից: Ֆինն հետազոտողները հատուկ ուշադրություն են դարձնում «սովորել սովորելու» (learning to learn) կարողունակություններին, այն համարելով հիմնաքար ամբողջ ուսումնական գործընթացի համար: Այս կարողունակությունը վերաբերում է կրթությանն ամբողջությամբ և չի սահմանափակվում որևէ ուղղությամբ կամ առարկայով: Այն ուղղորդում է կրթական գործընթացը և ազդում սովորողների ակադեմիական նվաճումների վրա: «Սովորել սովորելու» կարողունակությունը գործոն է դառնում ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման մեջ՝ որոշելով անհատի ճանաչողական հակումները և ինքնազարգացման ցանկությունը: Ֆինն հետազոտողները առանձնացնում են «սովորել սովորելու» կարողունակությունների հետևյալ հիմնական բաղադրիչները.

- մտածողության կարողություններ, խնդիրների լուծման հմտություններ,
- վերաբերմունք և արժեքներ՝ կապված դպրոցի և ուսումնական գործընթացի հետ,
- գիտելիք ստանալու ձգտում, որպես հատուկ մտածելակերպ:

Կարողունակություններից յուրաքանչյուրի համար սահմանված են ուսումնառությանակնկալվող վերջնարդյունքները: Կրթական կարողունակություններն են.

- սովորել սովորելու,
- մշակութային,
- մեդիագրագիտություն,
- հոգատարություն սեփական անձի նկատմամբ,
- S<S գրագիտություն,
- կարիերայի զարգացում,
- ապագայի կառուցման ներգրավվածություն, մասնակցություն:

(<https://vbudushee.ru/upload/iblock/f30/f30f7b26a9c431f523d437d5d85857b1.pdf>)

գ) Դիպարկենք Չինաստանի կրթության բովանդակության հիմքում ընկած կարողունակությունները, առանցքային գաղափարները: Չինաստանում կրթական համակարգը զգալի փոփոխություններ է կրում: Բարեփոխումները սկսվեցին 1980-ականներին, իսկ ընդամենը 33 տարում Չինաստանը այդ ճանապարհին անցավ այնպես, որ մյուս զարգացած երկրները, ինչպիսիք են Ֆրանսիան, ԱՄՆ-ն, Գերմանիան անցան մի ամբողջ դար:

Մինչ բարեփոխումների մեկնարկը բնակչության մոտ 23%-ը լրիվ անգրագետ էին, այսօր այս ցուցանիշն ընդամենը 5% է: Կարողունակությունների զարգացումը չինական կրթական համակարգում կառուցված է ընդհանուր ուսուցման մեջ՝ ներառյալ հիմնական տարրերը, առարկայական գիտելիքներից մինչև աշխարհայացքի և բնավորության զարգացում:

Կրթական կարողունակություններն են .

- ինքնազարգացում (սովորելու կարողություն, առողջ ապրելակերպ),
- մշակութային հիմքեր (մարդասիրություն, գիտական մոտեցում),
- սոցիալական ներգրավածություն (պատասխանատվություն, նորարարություն):

(<https://journals.sagepub.com/doi/10.1177/2096531119850905>)

դ) Դիպարկենք Կորեայի Հանրապետության կրթության բովանդակության հիմքում ընկած կարողունակությունները, առանցքային գաղափարները: Կորեայի Հանրապետությունը համարվում է զարգացող երկիր, այնուամենայնիվ նրա տնտեսությունը միջազգայնորեն հայտնի է բարձր տեխնոլոգիաներով և ֆինանսական առումով: Հարավային Կորեայի քաղաքացիների 68%-ը 25-34 տարեկանում ունեն առնվազն բակալավրի կոչում՝ սա ամենաբարձրն է համաշխարհային տնտեսապես զարգացած երկրների շարքում: Կոմպետենտ սովորողի բնութագիրներ՝

Ինքնակառավարում: Կառավարում է սեփական կյանքը, ունի ինքնություն և ինքնավստահություն՝ հիմնվելով կյանքի և մասնագիտական աճի համար անհրաժեշտ կարողությունների և որակավորումների վրա:

Աշխատել գիտելիքով և տեղեկատվությունով: Մշակում և կիրառում է տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներն ու տվյալները գործնական խնդիրների ռացիոնալ լուծման համար:

Ստեղծագործական մտածողություն: Կատարում է բացահայտումներ՝ ինտեգրելով տարբեր աղբյուրներից գիտելիքները, հմտությունները և փորձը:

Գեղագիտություն և հուզականություն: Գտնում և ընդունում է կյանքի իմաստներն ու արժեքները՝ ուրիշների ապրումակցելով և նրանց մշակութային առանձնահատկությունները ըմբռնելով:

Հաղորդակցություն: Լսում է ուրիշներին հարգանքով և արդյունավետ կերպով հաղորդակցվում: Ազատ արտահայտվում է սեփական մտքերն ու զգացմունքները կյանքի տարբեր իրավիճակներում:

Քաղաքացիական գրագիտություն: Ակտիվորեն մասնակցում է հասարակությունը դեպի լավը փոխելուն՝ ունենալով ազգային և համաշխարհային հանրության արժեքներ:

(<https://asiasociety.org/files/21st-century-competencies-south-korea.pdf>)

ե) Դիտարկենք Հայաստանի Հանրակրթության պետական չափորոշի բովանդակության հիմքում ընկած կարողունակությունները, առանցքային գաղափարները: ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչը ունի կարողունակահեն բնույթ: Կրթության բովանդակությունը կառուցվում է 8 առանցքային կարողունակությունների շուրջ: Այդ կարողունակություններին հասնելու համար չափորոշում սահմանված են կրթության երեք աստիճանների համար սովորողի ակնկալվող վերջնարդյունքները: Այդ վերջնարդյունքները ապահովելով սովորողի մոտ կզարգանան չափորոշի հիմքում դրված ներքոնշյալ ութ կարողունակությունները:

Կրթական կարողունակություններն են .

- լեզվական գրագիտություն,
- սովորել սովորելու,
- ինքնաճանաչողական և սոցիալական,
- ժողովրդավարական և քաղաքացիական,
- թվային և մեդիա,
- մշակութային,
- մաթեմատիկական և գիտատեխնիկական,
- տնտեսական կարողունակություն:

(<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>)

Վերջնարդյունքները ձևակերպված են դպրոցի կրթական տարբեր աստիճանների համար:

Վերջնարդյունքները պետք է լինեն՝

- հստակ ձևակերպված, միարժեք ընկալվող,
- հասանելի,
- շարունակական և զարգացող,
- չափելի:

Եզրակացություն: Ինչպես ներկայացվեց վերևում, զարգացած երկրների կրթության բովանդակության հիմքում դրված կարողունակություններն են: Ինչպես երևում է շարադրանքից, ՀՀ և Հանրակրթության պետական չափորոշի հիմքում կարողունակություններն են: Եթե միջև այսօր ուսուցիչը սովորողին ակադեմիական գիտելիքներով էր ապահովում և դաստիարա-

կում, այս չափորոշի պահանջով սովորողին տալու է ակադեմիական գիտելիքներ, զարգացնելու է սովորողի արժեքային համակարգը, ուշադրություն է դարձնելու նրա իմաստային դիրքորոշումներին, զարգացնելու է կարողություններն ու հմտությունները, քանի որ այդ պահանջներն է դրված չափորոշի հիմքում: Այսինքն դրանով լուծվում է հայկական դպրոցին բնորոշ այն խնդիրը, երբ սովորողը տիրապետում է ակադեմիական գիտելիքների, բայց առօրյա կյանքում, և հետո՝ մասնագիտական գործունեության մեջ դրսևորվում է անարդունավետ: Ընդհանրապես, կրթական համակարգում նորարարությունները արդյունավետ են և ժամանակի հրամայական: Աշխարհում նույնիսկ ամենազարգացած երկրներում պարբերաբար փոփոխություններ կատարվում են կրթական ոլորտում: Ցանկացած երկրի զարգացվածության և բարեկեցության աստիճանը պայմանավորված է այդ երկրի վարած կրթական քաղաքականությամբ: Հուսով ենք, որ մեր որդեգրած նոր կրթական համակարգը համապատասխանում է նաև մեր ազգային առանձնահատկություններին և արժեքներին, կարողանալու են լուծել կրթական ոլորտում առկա խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական նոր չափորոշիչ
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>
2. OECD (2010), PISA 2009 Results: What Students Know and Can Do: Student Performance in Reading, Mathematics and Science (Volume I), OECD Publishing.
<https://www.oecd.org/pisa/pisaproducts/48852548.pdf>
3. Sahlberg, P. (2007), “Education Policies for Raising Student Learning: The Finnish Approach”, Journal of Education Policy, Vol. 22, No. 2, pp. 147-171.
<https://www.adb.org/sites/default/files/publication/28210/wp097.pdf>
4. ASER (Annual Status of Education Report)—Pakistan. 2011. Annual Status of Education Report (Rural). Islamabad: South Asian Forum for Education Development (SAFED). Available on-line: <http://www.safedafed.org/aser/document/aser/2011/Total%20PDF%20Aser%20Report%20Low%20resolution.pdf>

5. 2012. Annual Status of Education Report 2011: National (Rural)Paid Tuition. Islamabad: South Asian Forum for Education Development (SAFED). Available on-line: http://www.aserpakistan.safedafed.org/document/report_cards/2011/Tuition.pdf
6. United Nations Development Programme. Human Development Index (HDI): Education Index [URL: hdr.undp.org].
7. United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO) Institute for Statistics. Data Centre [URL: data.uis.unesco.org].
8. United Nations Statistics Division. UNdata [URL: data.un.org].
9. <https://www.marieclaire.ru/stil-zjizny/10-universitetov-gde-uchilis-monarshie-osobyi-buduschie-prezidentyi-akteryi-i-pisateli/>
10. <https://education.alberta.ca/competencies/student-competencies/everyone/documents/>

REFERENCES

1. Hanrakrtoutyan petakan nor chaporoshich
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>

АИДА САРГСЯН - НЕОБХОДИМОСТЬ РЕФОРМ ОБРАЗОВАНИЯ. НОВЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ СТАНДАРТ

Ключевые слова: *контентобразования, компетенция, знание, умение, ценность, позиция, конечный результат*

Цель данной статьи - рассматривать изменения содержания образования в ведущих странах в сфере образования, а также в Республике Армения.

Обсуждаются ключевые факторы успеха и компетенции, лежащие в основе образовательного содержания нескольких стран.

Представлены общие тенденции развития и реформ образования в мире в 21 веке. Объясняется понятие компетенции, необходимость ее применение в образовании в соответствии с требованиями государственного стандарта общего образования Республики Армения.

Интерпретируются 8 ключевых общеобразовательных компетенций нового государственного стандарта общего образования в Республике Армения, на основе которых строится структура образования.

AIDA SARGSYAN - THE NEED FOR EDUCATION REFORMS: A NEW STATE MEASURE OF PUBLIC EDUCATION

Keywords: *content of education, competence, knowledge, skill, value, opinion, result*

This article examines the changes in the content of education in the leading countries in the field of education, as well as in RA.

The article discusses key success factors and competencies underlying the educational content of several countries.

It presents the general trends of educational developments and reforms in the world in the 21st century. It explains the concept of competence, the necessity of transition to competent education according to the requirements of the state standard of RA general education.

The material interpreters 8 key general education competencies of the new state standard of general education of RA, on the basis of which the content of education is built.

**ԲՈՒՀԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՎՐԱ**

ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածում քննարկվում են բուհերում ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման և կազմակերպական մշակույթի միջև կապը և դրանց փոխազդեցությունը: Բուհերում ինստիտուցիոնալ գիտելիքը ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր գործոններից է, որի կառավարումը նպաստում է բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և մրցակցային առավելության ձեռքբերմանը: Բուհերում ինստիտուցիոնալ գիտելիքի արդյունավետ կառավարումը հիմնվում է ամուր կազմակերպական մշակույթի վրա:

Հոդվածում քննարկվում են նաև կազմակերպական մշակույթի չորս հիմնական տեսակները (ճկուն, խմբային, աստիճանակարգության և շուկայական մշակույթները), որոնցից մեկը՝ ճկուն մշակույթը, ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացի վրա ամենամեծ ազդեցությունն ունի: Ճկուն մշակույթ ունեցող բուհերում խրախուսվում են նորարարությունը և ստեղծարարությունը, կիրառվում են խնդիրների լուծման, որոշումների կայացման և փոփոխությունների կառավարման ճկուն համակարգեր, համադրվում են ավանդական և ռազմավարական մոտեցումները:

Հիմնաբառեր՝ *ինստիտուցիոնալ գիտելիք, ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարում, բուհ, բարձրագույն կրթություն, կազմակերպական մշակույթ, մրցակցային առավելություն:*

Ներածություն: Բուհերում ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարումը համարվում է ռազմավարական կառավարման և մրցակցային առավելություն ստեղծող կարևոր գործոններից մեկը: Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացում մեծ նշանակություն, դեր ու ազդեցություն ունի կազ-

մակերպական մշակույթը, քանի որ կազմակերպական մշակույթի բաղադրիչների¹ փոխկապակցված ամբողջությունը հնարավորություն է ընձեռում բուհի կառավարման բոլոր դերակատարներին արդյունավետորեն կիրառելու գիտելիքը և այն լավագույնս ծառայեցնելու բուհի սահմանած առաքելության իրականացմանը:

Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության բարձրացումն ու շարունակական բարելավումը գլխավորապես պայմանավորված են գիտելիքահենք տնտեսության զարգացմամբ և դրա միջոցով ազգային կրթության համակարգի մրցունակության բարձրացմամբ: Այս համատեքստում պետության, այդ թվում նաև բուհերի կարևորագույն գործառույթներից է մրցունակ գիտելիքահենք տնտեսության խթանումը: Ըստ ՏՀԶԿ սահմանման՝ գիտելիքահենք է համարվում այն տնտեսությունը, որում առաջնային նշանակություն է տրվում գիտելիքի, նորարարության և տեղեկատվության տարածմանն ու տնտեսության տարբեր ոլորտներում դրանց հետևողական կիրառմանը (OECD 1996): Գիտելիքահենք տնտեսության ստեղծման ու զարգացման գործընթացներում բուհերն ու դրանց կազմակերպական մշակույթներն ունեն մեծ դերակատարություն և հանդես են գալիս որպես գիտելիքի ստեղծման, փոխանցման ու տարածման առանցքային դերակատարներ: Ինստիտուցիոնալ գիտելիքը բուհի ներքին (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական (ՊԴ), վարչական և ուսումնասօժանդակ (ՈՒՕ) կազմեր) և արտաքին (շրջանավարտներ, գործատուներ) շահակիցների կողմից ստեղծված ու կուտակված գիտելիքի, արժեքավոր փորձի ու տեղեկության համալիրն է, որը ձևավորում է կազմակերպական մշակույթի առանձնահատկություններն ու նպաստում բուհի գործունեության զարգացմանը: Ինստիտուցիոնալ գիտելիքը գիտելիքահենք տնտեսության առանցքային գործոններից մեկն է, և հիմնվելով դրա վրա՝ բուհերը կարևորում են գիտելիքի արդյունավետ կառավարման գործընթացը ժամանակակից մրցակցային արագ զարգացող միջավայրում:

Հողվածի նպատակը: Սույն հողվածի նպատակն է համադրմամբ վերլուծել և ներկայացնել բուհերի կազմակերպական մշակույթի ազդեցությունը

¹ Կազմակերպական մշակույթի հիմնական բաղադրիչներն են կազմակերպության համընդհանուր նորմերը, արժեքները, գործունեության «խաղի կանոնները», բարոյահոգեբանական մթնոլորտը, աշխատակիցների հմտությունները, աշխարհայացքը, խորհրդանիշները, ծեսերը և արարողակարգերը, ավանդույթները, կարգախոսները, ղեկավարման ոճը (Մակարյան 2022):

ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացների արդյունավետության վրա:

Հեղազոտության արդիականությունը և նորույթը: Թեև գիտելիքի կառավարումը և կազմակերպական մշակույթը մշտապես եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում, այդուհանդերձ, բուհերի կազմակերպական մշակույթի ու ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման կապը և փոխազդեցությունը ռազմավարական կառավարման տեսանկյունից ոչ միշտ են խորքային ուսումնասիրության ենթարկվել: Հետևապես, սույն հոդվածի թեմայի շրջանակներում կատարված հետազոտությամբ փորձ է արվել որոշ չափով լրացնել այդ բացը և համալրել առկա մասնագիտական գրականությունը:


Հեղազոտության մեթոդները: Սույն հետազոտության համար կիրառվել են երկրորդային տվյալների վերլուծության, համադրման և համեմատության մեթոդները: Սույն հոդվածի մեթոդաբանական հենքը ներառում է մասնագիտական գրականության և լավագույն փորձի ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները:

Բուհերում կազմակերպական մշակույթի և գիտելիքի կառավարման գործընթացի փոխազդեցությունը: Բուհերում ինստիտուցիոնալ գիտելիքը մրցակցային առավելության ապահովման առաջնային նախադրյալներից և ռազմավարական նշանակություն ունեցող ռեսուրսներից մեկն է, որը նպաստում է բուհի գործունեության երկարաժամկետ կայունության և զարգացման ապահովմանը: Բուհը մեծ ներդրում ունի ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծման գործընթացում՝ ապահովելով ենթադրելի (tacit knowledge) և հստակ գիտելիքների (explicit knowledge) (Nonaka 1994) միջև կապը: Ենթադրելի գիտելիքն անհատական է, կուտակվում է ուսուցման և անձնական փորձի միջոցով, զարգանում է այլ աշխատակիցների հետ փոխգործակցության գործընթացի միջոցով: Հստակ գիտելիքը պահվում է փաստաթղթերում, այլ ոչ թե աշխատակիցների ուղեղներում, և այն կարող է հեշտությամբ հասանելի լինել ուրիշներին և փոխանցվել կամ կիսվել: Նոնական (Nonaka 1994) շեշտադրում է, որ նոր գիտելիքների ստեղծումը կախված է ենթադրելի գիտելիքի կուտակումից, ինչը նշանակում է, որ կազմակերպությունները, այդ թվում նաև բուհերը պետք է ուսումնասիրեն աշխատակիցների մտքում անուղղակի կերպով առաջացած համոզմունքները և ոգեշնչումները՝ նոր գիտելիք ստեծելու համար:

Ինստիտուցիոնալ գիտելիքը կազմակերպության մտավոր կապիտալի կառավարման հիմնաբաղադրիչն է: Մտավոր կապիտալի արդյունավետ կա-

նավարումից են մեծ մասամբ կախված ամբողջ բուհի գործունեության արդյունավետությունը և մրցակցային առավելությունը: Մտավոր կապիտալը կազմված է բուհի համար օգտակար գիտելիքների պաշարից և փոխանցումից: Այն մարդկային ներուժի այն արժեքավոր հատկությունն է, որը կարող է զարգացվել համապատասխան նեղրումների միջոցով: Ինստիտուցիոնալ գիտելիքը կարող է փոխակերպվել չորս եղանակով (Գծապատկեր 1).

Գծապատկեր 1. Գիտելիքի փոխակերպման չորս եղանակները



Նոնական (Nonaka 1994) առանձնացրել է գիտելիքի փոխակերպման վերոնշյալ չորս եղանակները, որոնց իրականացման վրա շատ մեծ ազդեցություն ունի կազմակերպական մշակույթը՝ որպես միջանձնային հարաբերությունների կարգավորման և կայուն համագործակցության գրավական: Հիմնվելով ՀԱՀՆ¹ (հանրայնացում, արտակայում, համակցում, ներակայում) մոդելի վրա՝ նա փոխկապակցել է հստակ և ենթադրելի գիտելիքները և ցույց տվել դրանց փոխազդեցության աստիճանը.

- **հանրայնացումը** (socialization) միասնական ենթադրելի գիտելիքի ստեղծման գործընթաց է համատեղ փորձառության միջոցով: Հանրայնացման ընթացքում մեկ աշխատակցի ենթադրելի գիտելիքը տարածվում և փոխանցվում է այլ աշխատակցին, և այն դառնում է մյուս աշխատակցի ենթադրելի գիտելիքի մի մասը,

¹ ՀԱՀՆ-ն անգլերեն SECI մոդելի համարժեքն է, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ S (Socialization), E (Externalization), C (Combination), I (Internalization):

- **արտակայում** (externalization) սկիզբ է առնում երկխոսության միջոցով, որի նպատակն է ենթադրելի գիտելիքից ստեղծել գաղափարներ,
- **համակցումը** (combination) նոր և առկա հստակ գիտելիքը ինստիտուցիոնալ գիտելիքի հավաքագրման գործընթացն է,
- **ներակայում** (internalization) հստակ գիտելիքը ենթադրելի գիտելիքի կամ աշխատակցի հմտության կամ գործառնական գիտելիքի արտակայման գործընթացն է:

Գիտելիքի այս չորս փոխակերպումներն իրականացնելու համար անհրաժեշտ է տարանջատել գիտելիքի հետևյալ հիմնական տեսակները (OECD 1996).

Իմանալ ինչ (Know-what)

- վերաբերում է փաստերին և տեղեկատվությանը,
- կարող է զարգանալ ձեռնարկատիրության ոլորտում կրթության իրականացման միջոցով:

Իմանալ ինչու (Know-why)

- վերաբերում է գիտական գիտելիքի հիմունքներին, բնության օրենքներին և ընկած է արդյունաբերության ճյուղերի տեխնոլոգիական զարգացման, արտադրանքի ու գործընթացի, առաջընթացի հիմքում,
- զարգանում է հետազոտական հաստատությունների, լաբորատորիաների և բուհերի հետ համագործակցության արդյունքում,
- զարգանում է նաև ձեռնարկատերերի հետ համագործակցության և դասախոսությունների միջոցով՝ նպաստելով բուհի ձեռնարկատիրական միջավայրի զարգացմանը:

Իմանալ ինչպես (Know-how)

- վերաբերում է ինչ-որ բան անելու կարողությանը կամ հմտությանը,
- զարգացվում և պահպանվում է բուհերում՝ որպես տվյալ բուհի առանձնահատկություն, ինչպես նաև գիտելիք,
- կարող է ձեռնարկատիրական գործունեության գործնական ասպեկտների շուրջ քննարկումների և սեմինարների միջոցով նպաստել ինստիտուցիոնալ գիտելիքի զարգացմանը:

Իմանալ ով (Know-who)

- ներառում է տեղեկատվություն այն մասին, թե «ով ինչ գիտի» և «ով գիտի՝ ինչպես անել»,

- ենթադրում է միջանձնային հաղորդակցման հմտությունների կատարելագործում և ձեռնարկատերերի հետ ուսանողների և աշխատակիցների սոցիալական կապերի ընդլայնում,
- ներքին և ամենաարժեքավոր գիտելիքն է բուհերի համար:

Իմանալ երբ (Know-when)

- կատարելագործում է նոր հնարավորություններ գտնելու և դրանք կառավարելու հմտությունները,
- հնարավորություն է տալիս ձևավորելու և զարգացնելու բուհերի ՊԴ կազմի և ուսանողների շրջանում ստեղծագործական և նորարարական մտածողությունը՝ բազմաթիվ քննարկումներին մասնակցելու միջոցով:

Գիտելիքի *իմանալ-ինչը* և *իմանալ-ինչու* տեսակները զարգանում են գրքեր ընթերցելու, դասախոսություններ լսելու, տվյալների շտեմարաններ մուտք գործելու, իսկ *իմանալ-ինչպես*, *իմանալ-ով* և *իմանալ-երբ* տեսակները՝ գործնական հմտությունների ձեռքբերման շնորհիվ: Գիտելիքի այս բոլոր տեսակները միասին կառուցում են ինստիտուցիոնալ գիտելիքը, որը պատկանում է ամբողջ բուհին, այլ ոչ թե անհատ աշխատակիցներին առանձնաբար:

Վերոնշյալ գիտելիքներն ի շահ բուհի ծառայեցնելու համար անհրաժեշտ է արդյունավետ և թիրախային կերպով կառավարել դրանք: Ներկայումս բուհերում մեծ նշանակություն է տրվում հատկապես ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացին, որը փոխկապակցված է գիտելիքահենք տնտեսության զարգացման հետ: Գիտելիքահենք տնտեսությունում առաջնային է համարվում ոչ միայն ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծումը, այլ նաև դրա կառավարումն¹ ու տնտեսության տարբեր ոլորտներում դրա շարունակական զարգացումը (Tessier 2021):

Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարումը ենթադրելի գիտելիքի փոխակերպումն է հստակ գիտելիքի և դրա փոխանցումը բուհի ներսում: Ինստիտուցիոնալ գիտելիքը ստեղծվում, փոխանցվում և կառավարվում է միայն բարենպաստ կազմակերպական մշակույթի առկայության դեպքում: Դրա արդյունավետ կառավարումը կարևոր է բուհի երկարաժամկետ հաջողությունն ապահովելու, աշխատակիցների մոտիվացիան մշտապես բարձր պահելու և զարգացող աշխարհի նորամուծություններին զուգահեռ շարժվելու համար:

¹ Առաջին անգամ «գիտելիքի կառավարում» (անգլերեն՝ knowledge management) եզրույթը կիրառվել է կառավարման խորհրդատու Կառլ Վինգի կողմից 1986 թ. ՄԱԿ-ի նիստի ժամանակ:

Տարբեր տեսաբանների կարծիքով ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարումը՝

- կազմակերպություններում հնարավորություն է տալիս արագ կերպով արձագանքելու արտաքին միջավայրի պահանջներին և կանխատեսելու մրցակցային միջավայրի փոփոխությունները (Drucker 1999),
- ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծման, վերափոխման և կիրառման գործընթացն է (Lin 2007),
- ինստիտուցիոնալ գիտելիքների ստեղծման, փոխանցման, կուտակման պլանավորված հստակ մոտեցում է՝ կազմակերպության զարգացման և մրցունակության բարձրացման ռազմավարությամբ (Du Plessis & Boon 2004),
- շարունակական և համակարգված գործընթաց է ինստիտուցիոնալ հստակ և ենթադրելի գիտելիքներ ստեղծելու, պահպանելու, փոխանցելու և վերաարժևորելու նպատակով (Kumar & Kumar 2015),
- հնարավորություն է տալիս հավաքագրելու և դասակարգելու առկա գիտելիքը և որպես արժեք այն տարածելու կազմակերպությունում (Tessier 2021):

Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման մշակույթի զարգացման համար բուհերում պետք է ձևավորել և արմատավորել տարբեր ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների միջև համագործակցային կազմակերպական մշակույթ: Օդը և Այավուն (Ode & Ayavoo 2020) հավաստում են, որ կազմակերպական մշակույթը, որն արժեքների և նորմերի ամբողջություն է, դրականորեն է ազդում գիտելիքի կառավարման գործընթացի վրա: Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացում կազմակերպական մշակույթն ամենաուժեղ, բայց միևնույն ժամանակ ոչ ակնհայտ ազդեցություն ունեցող գործոնն է: Ինստիտուցիոնալ գիտելիքի արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն բուհի կազմակերպական զարգացած մշակույթ ունենալու շնորհիվ: Այն բուհերը, որոնք ունեն ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծման, փոխանակման և տարածման գործընթացների վրա հիմնված կազմակերպական մշակույթ և աշխատողակենտրոն մոտեցում, կարող են թիրախային հաջողությունների հասնել, իսկ այն բուհերը, որոնք ավելի շատ կենտրոնացած են ընթացիկ աշխատանքների իրականացման, այլ ոչ թե դրանց վերջնարդյունքներին հասնելու վրա, հեշտությամբ կարող են ձախողել գործընթացը: Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման մշակույթ ստեղծելու համար պետք է ամրապնդել ինստիտուցիոնալ գիտելիքի կառա-

վարման և բուհի առաքելության, նպատակների և խնդիրների միջև կապը: Դելոնգը և Ֆահեյը (Delong & Fahey 2000) առանձնացրել են ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման վրա կազմակերպական մշակույթի ազդեցության չորս տարբերակ.

- կազմակերպական մշակույթի ազդեցությունն ինստիտուցիոնալ գիտելիքի բացահայտման և կազմակերպությունում դրա կարևորության ամրապնդման վրա,
- կազմակերպական մշակույթի ազդեցությունն աշխատակիցների և ինստիտուցիոնալ գիտելիքի միջև կապ ստեղծելու վրա,
- արտակարգ (ֆորս-մաժորային) իրավիճակներում կազմակերպական մշակույթի ազդեցությունը գիտելիքի կիրառման վրա,
- կազմակերպական մշակույթի ազդեցությունն ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծման և տարածման գործընթացների վրա:

Մի շարք այլ հետազոտողներ նույնպես շեշտադրել են ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման վրա կազմակերպական մշակույթի ազդեցության մասին: Մասնավորապես, Ֆլորին (Fleury 2009) հավաստում է, որ կազմակերպական մշակույթը հատկորոշում է, թե ինստիտուցիոնալ որ գիտելիքներն ու հմտություններն են կարևոր կազմակերպությունում, և ովքեր են դրանց համար պատասխանատու: Ռոբինսի և Ջաջի (Robins & Judge 2022) հետազոտություններն էլ փաստում են, որ կազմակերպական մշակույթը բոլոր տեսանկյուններից ազդում է կազմակերպության վրա, և այդ ազդեցությունը նկատելի է աշխատակիցների վարքում, մոտիվացիայի և աշխատանքից նրանց բավարարվածության, կազմակերպության ընդհանուր գործունեության, ինստիտուցիոնալ գիտելիքների կառավարման, ստեղծարարության և նորարարության գործընթացներում: Կազմակերպական մշակույթն ունի տարբեր տեսակներ, և դրանցից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ազդում ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման վրա:


Հետազոտողները (Lee *et al.* 2019; Tran 2020; Martínez-Costa *et al.* 2019 և ուրիշներ) հիմնականում տարանջատում են կազմակերպական մշակույթի հետևյալ չորս տեսակները՝ *խմբային* (clan culture), *ճկուն* (adhocracy culture), *աստիճանակարգության* (hierarchy) և *շուկայական* (market culture) մշակույթները: Բազմաթիվ հետազոտողների կարծիքով կազմակերպական այս չորս մշակույթներից ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացի վրա հատկապես մեծ ազդեցություն ունի ճկուն մշակույթը: Խմբային մշակույթն ընդհանուր արժեքներով և նպատակներով, միասնականության և

փոխադարձ օժանդակության վրա հիմնված մշակույթ է: Շուկայական մշակույթը կենտրոնանում է արտաքին միջավայրի հետ կազմակերպության հարաբերությունների վրա, և դրա նպատակն է շուկայական մրցակցության միջոցով ստանալ շահույթ: Այս մշակույթի պարագայում մրցակցությունն աշխատակիցների համար ընդհանուր պայման է, ինչը սովորաբար հանգեցնում է անձնական հարաբերությունների վատթարացմանը և համագործակցության նվազեցմանը: Աստիճանակարգության մշակույթն ունի հստակ կազմակերպական կառուցվածք, ստանդարտացված կանոններ և ընթացակարգեր, խիստ վերահսկողություն և սահմանված պարտականություններ: Ի հակադրություն մյուս երեք մշակույթների՝ ճկուն մշակույթը հայտնի է որպես նորարարական և ձեռնարկատիրական հմտություններ զարգացնող մշակույթ, որի պարագայում աշխատակիցները ճկուն են և հակված են փոփոխությունների: Այս մշակույթը հիմնականում կենտրոնանում է աշխատակիցների միջև ինստիտուցիոնալ գիտելիքի փոխանակման վրա, որն էլ խթանում է նորարարությունը և արտադրողականության, ինչպես նաև աշխատակիցների միջև համագործակցության բարձրացումը (Lee *et al.* 2019): Ինստիտուցիոնալ գիտելիքի փոխանակումը ենթադրում է մարդկանց միջև համագործակցության ամրապնդում, մտքերի փոխանակում և ազատ հաղորդակցություն: Այս գործընթացը հատկապես դժվար է իրականացնել այն բուհերում, որտեղ ինստիտուցիոնալ գիտելիքը համարվում է իշխանություն, հեղինակություն և մասնագիտական զարգացման հնարավոր առաջընթաց, քանի որ աշխատակիցները կարծում են, որ կարող են ինստիտուցիոնալ գիտելիքի փոխանակմամբ կամ համագործակցությամբ կորցնել իրենց առավելությունը մյուսների նկատմամբ: Հետևապես ղեկավար կազմը պետք է աշխատակիցների շրջանում ձգտի ամրապնդել համագործակցության և ի շահ բուհի աշխատելու կարողություններն ու մշակույթը:

Ըստ Թրենի (Tran 2020)՝ ի տարբերություն խմբային և աստիճանակարգության մշակույթների, ճկուն մշակույթի հիմնական գործառույթը ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծումն ու փոխանակումն է, որն էլ բարձրացնում է բուհի գործունեության արդյունավետությունը: Մարտինեզ-Կոստան և ուրիշները (Martínez-Costa *et al.* 2019) պնդում են, որ եթե կազմակերպությունը չունի այնպիսի միջավայր, որտեղ ինստիտուցիոնալ գիտելիքի փոխանակումը խրախուսվում է, ապա շատ դժվար է կառավարել ինստիտուցիոնալ գիտելիքը:

Ինստիտուցիոնալ գիտելիքի արդյունավետ կառավարման համար առաջարկվել է ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման համընդհանուր մոդելը (Kumar & Kumar 2015): Մոդելը բաղկացած է չորս փոխկապակցված կարևոր փուլերից, որոնցից են ինստիտուցիոնալ գիտելիքի *ստեղծումը*, *պահպանումը*, *փոխանցումն* ու *կիրառումը* (Գծապատկեր 2).

Գծապատկեր 2. Ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման համընդհանուր մոդել



- **Գիտելիքի ստեղծումը** գիտելիքի կառավարման գործընթացի առաջին և թերևս ամենակարևոր փուլն է: Այս փուլում բուհում առկա գիտելիքների զարգացման և վերաիմաստավորման միջոցով ստեղծվում են նոր գիտելիքներ: Գիտելիքի ստեղծման գործընթացում առանցքային նշանակություն ունեն աշխատակիցների մոտիվացիան և խթանումը:
- **Գիտելիքի պահպանումը** գիտելիքի կառավարման երկրորդ փուլն է: Սա բուհի կարողությունն է պահպանելու առկա գիտելիքները և կենտրոնանալու դրանց համալրման, զարգացման և արտաքին միջավայրին համապատասխանեցման վրա:
- Գիտելիքի կառավարման հաջորդ կարևորագույն փուլը **գիտելիքի փոխանցումն է**: Բուհի հաջողության հասնելու գրավականներից է նաև աշխատակիցների համագործակցության միջոցով անհատական և ինստիտուցիոնալ գիտելիքների արդյունավետ փոխանցումը և կիրառումը:
- **Գիտելիքի կիրառումը** ամենավերջին, սակայն կարևոր փուլերից մեկն է: Փոխանցված գիտելիքն անհրաժեշտ է նաև արդյունավետ և թիրախային կերպով կիրառել՝ խթանելով նոր գիտելիքների ստեղծումն ու զարգացումը:

Եզրակացություն: Այսպիսով, արդյունավետ ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարումը ենթադրում է վերոնշյալ փուլերի հիման վրա ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման համընդհանուր մոդելի այնպիսի գործառում, որը միտված է բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը և մրցունակության բարձրացմանը: Համադրելով և վերլուծելով կատարված մասնագիտական գրականության ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարումը շարունակական և համակարգված գործընթացների իրականացումն է, որոնց արդյունավետությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման համընդհանուր մոդելի ու դրա առանցքային բաղադրիչների կիրառմամբ: Ինստիտուցիոնալ գիտելիքի արդյունավետ կառավարման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունի կազմակերպական մշակույթը: Կազմակերպական մշակույթը նորմերի, ինստիտուցիոնալ գիտելիքների, արժեքների և համոզմունքների համախումբ է, որը միավորում է աշխատակիցներին բուհի նպատակների շուրջ, ապահովում է համագործակցային մթնոլորտ, հնարավորություն է տալիս աշխատակիցներին միմյանցից սովորելու ու օժանդակելու՝ այդպիսով խթանելով բուհի համար ինստիտուցիոնալ գիտելիքի ստեղծումը, պահպանումը, զարգացումը և կիրառումը: Վերլուծությունից նաև պարզ է դառնում, որ ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման գործընթացի վրա հատկապես մեծ ազդեցություն ունի կազմակերպական մշակույթի չորս տեսակներից *ճկուն* մշակույթը, որը մեծացնում է աշխատակիցների միջև համագործակցությունը և ինստիտուցիոնալ գիտելիքի առավել արդյունավետ կառավարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մակարյան Մ., *Բուհերի կազմակերպական մշակույթի գործառույթների զարգացման և ընդլայնման միտումների շուրջ*/ Կրթությունը 21-րդ դարում գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, Երևանի պետական համալսարան, 2022 (1), էջ 209-216:
2. DeLong, D. W., & Fahey, L. 2000. *Diagnosing Cultural Barriers to Knowledge Management*. The Academy of Management Executive, Vol.14, 4: ABI/ Inform Global, pp. 113-127.
3. Drucker, P. F. 1999. *Knowledge-worker Productivity: The biggest Challenge*, California Management Review, 41(2), pp. 79-94.
4. Du Plessis, M. & Boon, J. A. 2004. *The Role of Knowledge Management in eBusiness and customer relationship management: South African case study findings*’, International Journal of Information Management, 24(1), pp. 73-86.
5. Fleury, M.T.L. 2009. *Organizational Culture and the Renewal of Competences*, Brazilian Administration Review, Jan/Mar, v. 6, n. 1, Brazil, pp. 1-14.
6. Lee, J. C., Shiue, Y. C. & Chen, C. Y. 2016a. *Examining the impacts of organizational culture and top management support of knowledge sharing on the success of software process improvement*. Computers in Human Behavior, pp. 462-474.
7. Lin, H.-F. 2007. *Knowledge sharing and firm innovation capability: an empirical study*. International Journal of Manpower 28(3/4), pp. 315-332.
8. Martínez-Costa, M., Jiménez-Jiménez, D. & Dine Rabeh, H. A. 2019. *The effect of organizational learning on interorganizational collaborations in innovation: An empirical study in SMEs*. Knowledge Management Research and Practice, 17(2), pp. 137-150.
9. Kumar, A., A. & Kumar, U., K. 2015. *Knowledge Management: A Review*. International Journal of Academic Research in Social Sciences & Humanities, Ijarsh, Vol 1, Issue 1, pp. 9-17.
10. Nonaka, I. 1994. *A dynamic theory of organizational knowledge creation*, Organization Science, 5(1), pp. 14-37.
11. Ode, E. & Ayavoo, R. 2020. *The mediating role of knowledge application in the relationship between knowledge management practices and firm innovation*, Journal of Innovation & Knowledge, 5(3), pp. 210-218.
12. OECD. 1996. *The knowledge-based economy*, Paris, 45 p.

13. Robins, S., Judge, T. 2022. *Organizational behaviour*. 19th ed., Pearson, UK, 676 p.
14. Tessier, D. 2021. *Handbook of Research on Organizational Culture Strategies for Effective Knowledge Management and Performance*, IGI global, USA, 427 p.
15. Tran, Q. H. 2020. *Organizational culture, leadership behaviour and job satisfaction in the Vietnam context*. The International Journal of Organizational Analysis, 6(2), pp. 100-250.
16. Walczak, S. 2005. *Organizational knowledge management structure*. Learning Organization 12(4), pp. 330-339.

REFERENCES

1. Makaryan M., Buheri kazmakerpakan mshakowyti gorcaruytneri zargacman ev yndlaynman mitumneri shurj//Krtutyuny 21-rd darum gitametodakan mijazgayin grakhosvogh handes, Yerevani petakan hamalsaran, 2022 (1), ej 209-216:

МАРИАМ МАКАРЯН - ВЛИЯНИЕ ОРГАНИЗАЦИОННОЙ КУЛЬТУРЫ НА ПРОЦЕССЫ УПРАВЛЕНИЯ ЗНАНИЯМИ В ВУЗЕ

Ключевые слова: институциональные знания, управление институциональными знаниями, вуз, высшее образование, организационная культура, конкурентное преимущество

В статье рассматриваются отношения и взаимодействие между институциональным управлением знаниями и организационной культурой в университетах. Институциональные знания в университете являются одним из ключевых факторов, имеющих стратегическое значение, управление которыми способствует развитию институциональных возможностей и получению конкурентных преимуществ. Эффективное управление институциональными знаниями в университете основано на сильной организационной культуре.

В данной статье также рассматриваются четыре основных типа организационной культуры (клановая, адхократия, рыночная, иерархическая), среди которых наибольшее влияние на управление институциональными знаниями оказывает клановая культура. Университеты с клановой культурой поощряют инновации и творчество, решение проблем, принятие решений и управление изменениями, а также применяют комбинированные традиционные и стратегические подходы к управлению.

MARIAM MAKARYAN - THE IMPACT OF ORGANIZATIONAL CULTURE ON THE PROCESSES OF INSTITUTIONAL KNOWLEDGE MANAGEMENT AT HEIs

Keywords: *institutional knowledge, institutional knowledge management, HEIs, higher education, organizational culture, competitive advantage*

The current article puts forward the relationship and interaction between institutional knowledge management and organizational culture at universities. Institutional knowledge of universities is one of the key factors having strategic importance, the management of which contributes to the development of institutional capacities and promotes gaining competitive advantage. Effective management of institutional knowledge at universities is based on strong organizational culture.

This article also discusses the four main types of organizational culture (clan, adhocracy, hierarchy and market cultures), among which the clan culture, has the greatest impact on the institutional knowledge management. The universities having clan culture encourage innovation and creativity, problem solving, decision making and change management, as well as apply combined traditional and strategic approaches to management.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- | | | |
|----|--|---|
| 1. | <p>ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԲԱՐԴԱԿՉՅԱՆ
ՕԳԱՆԵՍ
ԲԱՐԴԱԿՉԻԱ
ՈՎՆԱՆՆԵՍ
ՎԱՐԴԱԿՉԻԱՆ
ԱՆԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</p> | <p>Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ</p> <p>Аспирант Российско-Армянского университета</p> <p>PhD student of the Russian-Armenian University</p> <p>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետ և անգլերենի ամբիոնի դասախոս</p> |
| 2. | <p>ԱՆԻ
ՕԳԱՆԵՍԻԱՆ</p> <p>ԱՆԻ
ՈՎՆԱՆՆԻՍԻԱՆ</p> <p>ԳԱՅԱՆԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</p> | <p>Начальник департамента внешних связей и международного сотрудничества, преподаватель кафедры английского языка Государственного университета имени В. Брюсова</p> <p>Head of External Affairs and International Cooperation Department, Lecturer at the Chair of English of Brusov State University</p> <p>Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի տնօրեն</p> |
| 3. | <p>ԳԱԻՆԵ
ԱՐԱԿՅՈՒՆԻԱՆ</p> <p>ԳԱԻՆԵ
ԱՐԱԿՅՈՒՆԻԱՆ</p> | <p>PhD in Physics and Mathematics, Director of National Information Center for Academic Recognition and Mobility</p> <p>Кандидат физико-математических наук, директор Национального информационного центра академического признания и мобильности</p> |
| 4. | <p>ՄԱՐԻՆԱ
ԽԱՉՄԱՆՈՒԿՅԱՆ
ՄԱՐԻՆԱ</p> | <p>Երևան քաղաքի պատմության թանգարանի էքսկուրսիոն և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ</p> <p>Руководитель экскурсионного отдела и отдела</p> |

- ХАЧМАНУКЯН** по связям с общественностью Музея истории города Еревана
- MARINA
KHACHMANUKYAN
ՆԱՆԵ
ՄՈՎՍԻՍՅԱՆ** Head of the Department of Excursion and Public Relations of Yerevan History Museum
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի դասախոս
5. **НАНЕ
МОВСИСЯН** Преподаватель кафедры мировой литературы и культуры Государственного университета имени В. Брюсова
**NANE
MOVSISYAN
ՏԱԹԵՎԻԿ
ՍՈՂԻԿՅԱՆ** Lecturer at the Chair of World Literature and Culture of Brusov State University
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
6. **ТАТЕВИК
СОГИКЯН** Соискатель кафедры педагогики и методики преподавания языков Государственного университета имени В. Брюсова
**ТАТЕВИК
SOGHIKYAN** PhD student of the Chair of Pedagogy and Methods of Teaching Languages of Brusov State University
**ԱԻԴԱ
ԹՈՓՈՒԶՅԱՆ** Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ.Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ
7. **АИДА
ТОПУЗЯН** Доктор педагогических наук, профессор, заведующий кафедрой педагогики Армянского государственного педагогического университета им. Х Абовяна
**AIDA
TOPUZYAN** Doctor of Pedagogical Science, Professor, Head of the Chair of Pedagogy of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
**ԱՆՆԱ
ԴԱՐԲԻՆՅԱՆ** Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս
8. **АННА
ДАРБИНЯН** Преподаватель кафедры физической культуры и гражданской обороны Государственного

- ANNA
DARBINYAN
ԱԼԻՆԱ
ՇԱԼՋՅԱՆ
9. АЛИНА
ШАЛДЖЯН
- ALINA
SHALJYAN
ԷՎԵԼԻՆԱ
ԱՂԱՄՅԱՆ
10. ЭВЕЛИНА
АДАМЯН
- EVELINA
ADAMYAN
ԻԳՈՐ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
11. ИГОРЬ
КАРАПЕТЯН
- IGOR
KARAPETYAN
12. ԱԳՆԵՍԱ
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
- университета имени В. Брюсова
Lecturer at the Chair of Physical Education and
Civil Defense of Brusov State University
Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և
քաղաքացիական պաշտպանության ամբիոնի
դասախոս
Преподаватель кафедры физической культуры
и гражданской обороны Государственного
университета имени В. Брюсова
Lecturer at the Chair of Physical Education and
Civil Defense of Brusov State University
Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և
քաղաքացիական պաշտպանության ամբիոնի
դասախոս
Преподаватель кафедры физической культуры
и гражданской обороны Государственного
университета имени В. Брюсова
Lecturer at the Chair of Physical Education and
Civil Defense of Brusov State University
Մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի մանկավարժության և
լեզուների դասավանդման մեթոդիկայի
ամբիոն
Доктор педагогических наук, профессор,
преподаватель кафедры педагогики и
методики преподавания языков
Государственного университета имени В.
Брюсова
Doctor of Pedagogical Science, Professor at the
Chair of Pedagogy and Methods of Teaching
Languages of Brusov State University
Մանկավարժական գիտությունների դոկտոր, Վ.
Բրյուսովի անվան պետական համալսարանի
մանկավարժության և լեզուների
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
դասախոս

- ԱԳՈԵՏԱ
ՇԱՅՈՒՆԱՅԱՐՅԱՆ** Кандидат педагогических наук, преподаватель
кафедры педагогики и методики
преподавания языков Государственного
университета имени В. Брюсова
- AGNESA
SHAHNAZARYAN** PhD in Pedagogy, Lecturer at the Chair of
Pedagogy and Methods of Teaching Languages of
Brusov State University
- ԼՈՒՍԻՆԵ
ՍՈԴՈՄՈՆՅԱՆ** Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի մանկավարժության և
լեզուների դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դասախոս
13. **ЛУСИНЕ
СОГОМОНЯН** Преподаватель кафедры педагогики и
методики преподавания языков
Государственного университета имени В.
Брюсова
- LUSINE
SOGHOMONYAN** Lecturer at the Chair of Pedagogy and Methods
of Teaching Languages of Brusov State University
- ԼԻԼԻԹ
ԱՆՏՈՆՅԱՆ** Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի
մանկավարժության ամբիոնի հայցորդ
14. **ЛИЛИТ
АНТОНЯН** Соискатель кафедры педагогики Армянского
государственного педагогического
университета имени Х. Абовяна
- LILIT
ANTONYAN** PhD student of the Chair of Pedagogy of Kh.
Abovian Armenian State Pedagogical University
- ՎԱԼՏԵՐ
ԲԵՐԲԵՐՅԱՆ** ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԿԶՆԱԿ
հիմնադրամ, Երևանի պետական
համալսարանի ասպիրանտ
15. **ВАЛЬТЕР
БЕРБЕРЯН** Министерство ОНКС РА, фонд НЦОРИ,
аспирант Ереванского государственного
университета
- VALTER
BERBERYAN** Ministry of ESCS of the RA, Faoundation NCEDI,
PhD student of YSU
- ԱԻԴԱ
ՍԱՐԳՍՅԱՆ** ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԿԶՆԱԿ
հիմնադրամ, Չափոփորշի լրամշակման և
զարգացման բաժնի մասնագետ
16. **АИДА
САРГСЯН** Министерство ОНКС РА, фонд НЦОРИ,
Специалист отдела пересмотра и разработки
стандартов

- AIDA
SARGSYAN
ՄԱՐԻԱՄ
ՄԱԿԱՐՅԱՆ**
- Ministry of ESCS of the RA, Faoundation NCEDI,
Standards Review and Development Specialist
Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի կրթության կառավարման և
պլանավորման ամբիոնի հայցորդ
- 17. МАРИАМ
МАКАРЯН**
- Соискатель кафедры планирования и
управления образованием Государственного
университета имени В. Брюсова
- MARIAM
MAKARYAN**
- PhD student of the Chair of Education
Management and Planning of Brusov State
University

Համակարգչային ծևավորումը՝

Հասմիկ Փիլավջանի,
Սիրանուշ Ղևգարյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 60 830 111
Էլ. հասցե՝ bsu.sciencedep@gmail.com
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 2(61) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ-ի գիտական խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N° 5 նիստի որոշմամբ: